ԵՐԵՎԱՆ

#2(75)
2022

քաղաքի
ամսագիր

ереван / yerevan

2022.
Ռելոկացիա

Paul-ը Հայաստանում.
ֆրանսիական
ապրելակերպի
արվեստը
էջ՝ 8

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«Անտարեսը»

► Ստեղծում է
ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ

- գրքեր
- ձեռնարկներ
- դասագրքեր

► Ձգտում է ձևավորել
ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ

- մթնոլորտ
- մրցակցություն
- հասարակություն

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ մթնոլորտը ձևավորվում է այն մարդկանց միջոցով, որոնք կարևորում ու ձեռք են բերում ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ գրքեր:
Ձևավորի՛ր մթնոլորտ:

Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
antares@antares.am / www.antares.am



https://www.instagram.com/vladimir_abrih

Ռուսապրանքի
սթրիթ-արտիստ
Վլադիմիր Աբրիխի
գրաֆիտին
Երևանում

Ինչպես հայտնի է, 2022-ի գարունը Երևանում, մեղմ ասած, ոչ գարնանային ստացվեց: Մարտին ձյուն էր գալիս այնպես, կարծես նոր տարվա շեմին լինեինք, մայիսին հոկտեմբերին հարիր անձրևներ էին: Ինչպես հայտնի է սեզոնի գլխավոր կատակից՝ հայերն այնքան հյուրընկալ են, որ Ռուսաստանից տասնյակ հազարներով տեղափոխվածների համար նույնիսկ իրենց հասկանալի ու հաճելի եղանակն են տրամադրում:

Կատակը, ինչպես հաճախ պատահում է, միայն մասամբ է կատակ. Հայաստանն իրոք հյուրընկալ երկիր է ոչ միայն մի շաբաթով եկող զբոսաշրջիկների, այլև կյանքի բերումով անհայտ ժամանակով տուն-տեղ-շունիկներով տեղափոխվողների համար: Համենայն դեպս, այս ընթացքում մեզ հանդիպած բոլոր ռելոկացվածները դա էին փաստում: Մոսկվացի մի բավական կայացած ամսագրային լուսանկարիչ, օրինակ, ասաց բառացի սա. «Երկու ամսում երկու հատիկ տհաճ մարդ եմ հանդիպել, երկուսն էլ Ռուսաստանից էին»:

Բայց եթե այդ վկայությունը չափազանց սուբյեկտիվ է ու զուցե շատ բան չի նշանակում, ապա հաստատ մի բան նշանակում են մեկը մյուսի հետևից բացվող «ռելոկացիոն օբեկտները», ռելոկացված արտիստների ելույթներից կազմված ռեյվերը, ռոք համերգները, սթենդափ ներկայացումները, զանազան երաժշտական ու թատերական փառատոները: Դե ամբողջական գրասենյակներով Երևան տեղափոխվող ՏՏ ընկերությունների մասին խոսելն էլ ավելորդ է:

Իհարկե, կարելի է (ու պետք է) հիշել այս ամենի արդյունքում առաջացած խնդիրները՝ անշարժ գույքի գների թռիչքային աճը, որոշ հանրային վայրերի չտեսավարի ուշադրությունը հյուրերի հանդեպ, և այլն, և այլն: Բայց բոլոր լուրջ փոփոխությունների հետ կոմպլեկտում միշտ լինում են բարդություններ, որոնք պարզապես պետք է լուծել: Իսկ սա իրոք մեծ փոփոխություն է: Փոխվում է աշխարհը, փոխվում է միլիոնավոր ուկրաինացիների կյանքը (նրանցից ոմանք նույնպես այսօր Երևանում են), փոխվում է միլիոնավոր ռուսաստանցիների կյանքը: Ինչպես պարզվեց, փոխվում է նաև Երևանը: Շատ պայմանական, բայց դժվար է զուգահեռներ չտանել 1920-ականների մյասնիկյանական պրոյեկտի հետ, հետպատերազմյան հայրենադարձության ալիքի հետ, 2010-ականներում սիրիահայերի բերած փոփոխությունների հետ:

Երևանում նոր կյանք են փնտրում հազարավոր մարդիկ: Այդ մարդիկ իրենց հետ բերում են մի նոր Երևան: Ինչպիսին կլինի այդ նորը, կախված է արդեն բոլորիցս:

Գլխավոր խմբագիր
Արտավազդ Եղիազարյան

ՔԱՂԱՔԱՄԵՋ

04 խառը

Ամսվա ամփոփում
Նոր նստավայրեր, նոր գրքեր և այլն:

06 Բնություն
Մի ծառով գարուն կգա
Ծառապուկնկ Երևանի կոնյակի գործարանի հարակից փարածքում Հայաստանում կոնյակագործության 135-ամյակի առիթով:

08 Նստավայր

Paul-ը Հայաստանում. ֆրանսիական ապրելակերպի արվեստը
Հռչակավոր ֆրանսիական սրճարանի հանդիսավոր մուտքը Հայաստան:

10 Ֆեշն
Հայկականը նորաձև է
Հայաստանյան նորաֆլության խոստումնալից ներկան ու պայծառ ապագան:

12 Տվյալներ

Հենց այսպես էլ ապրում ենք՝ ըստ Կովկասյան բարոմետրի
Կարևոր տվյալներ Կովկասյան բարոմետրից, որոնք կօգնեն ավելի լավ ճանաչել մեր հասարակությունը:

14 Առողջություն
30 պատճառ ծխելը թողնելու համար
Բայակրում է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը:

ՌԵԼՈԿԱՑԻԱ

16 Թրևագիր

Հրաժեշտ Մոսկվային
Ինչպիսին էր կյանքը Մոսկվայում ռուս-ուկրաինական պատերազմի առաջին օրերին:

19 Խոշոր պլան
«Ցանկացած տեղ կարող է դառնալ քո տունը»
Հայաստան ռելոկացված ռուսաստանցիների անձնական պատմությունները:

26 Անշարժ գույք
Անշարժ գույքից պատերազմ և հակառակը
Ինչպես ռելոկացիայի ալիքներից յուրաքանչյուր հայաստանյան անշարժ գույքի շուկան:

28 Անձնական փորձ
Իրպենից Երևան. սեփական տան որոնումներով
Հայ-ուկրաինական ընտանիքում ծնված Եվգենիա Մելքոնյանի դրամատիկ ճանապարհը՝ Իրպենից Երևան:

30 Սեփական փորձ

Լինել Լուգանսկից, սիրել Կիևը, ապրել Երևանում. «Կարծես այնտեղ լինեմ»
Երևանաբնակ ուկրաինուհին՝ պատերազմի, իր մտերիմների ու երկու մայրաքաղաքների միջև ապրելու մասին:

32 Տուն

Բոլորի տունը. Rambalkoshe-ի արտ ռեզիդենտները
Ինչպես ռելոկացված երկու լրագրող դարձան Rambalkoshe-ի առաջին արտ ռեզիդենտները:

36 Արվեստ

Նկարազարդ նախաճաշ
Ինչպես ռուսաստանցի և լեղուցի նկարիչներն անցկացրեցին երևանյան նկարազարդ նախաճաշերը:

42 Համերգ

Camerata Fest Yerevan
Մեղավորված արտիստների առաջին մեծ միջոցառումը Երևանում:

46 Գրասենյակ
Պլանավորման հորիզոնը՝ 30 բոպե
Սանկտ Պետերբուրգից Երևան լեղափոխված մի գրասենյակի առօրյան:

48 Համերգ
Նաս նե դագոնյատ
Ինչպես են անցնում ռուսական մասնակցությամբ երևանյան տուսովկաները նորաբաց «Մուֆ» տարածքում և այլուր:

52 Կադրերի բաժին

Երևան-Մոսկվա գնացքը, 1991 թվական
Մի ֆոտո դրվագ՝ Մոսկվա-Երևան երկաթգծի պատմությունից:

Շապիկ՝
Անի Օվսեյան

ԵՐԵՎԱՆ #2(75) | 2022

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Արտ-տնօրեն՝
ՆՈՆՆԱ ԻՍԱՋԱՆՅԱՆ

Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ

Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզոյան, Միքայել Զոլյան, Դիանա Մարտիրոսյան, Եվգենիա Մելքոնյան, Էլեն Բաբալյան, Սոնա Բալասանյան, Արեգ Դավթյան

Լուսանկարներ և պատկերազարդումներ՝
Բիայնա Մահարի, Վահան Ստեփանյան, Հայգազ Կրաղենյան, Առնոս Մարտիրոսյան, Վիլյամ Կարապետյան, Պոլինա Կալաշնիկովա, Այլոնա Վորոնինա, Օլյա Պտաշնիկ, Մարիա Գոլուբկովա, Սառա Շաբոյան, Լյուսի Սիբիրցևա, Նատալյա Միրզոյան, Ասյա Կիսելևա, Աշխեն Մուրադյան, Էլինա Երկանյան, CRRC, Երևանի կոնյակի գործարան, Galaxy Group, Արա Դավթյանի արխիվ, Վլադիմիր Սբիխ

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ

Տնօրեն՝
Արտավազդ Եղիազարյան

Հայաստանի Հանրապետություն, 0014, Երևան, Պարույր Սևակ 8
Էլ. փոստ՝ evnmag@gmail.com
Առցանց՝ evnmag.com

facebook.com/YerevanCityMagazine

instagram.com/evnmag

© 2011-2022 **«ԵՐԵՎԱՆ»**

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում Արտավազդ Եղիազարյանը:

Համարը տպագրության է հանձնվել՝ 17.05.2022

Տպագրված է Անտարես տպագրատանը, 0009, Երևան, Մաշտոցի 50ա/1

Տպաքանակ՝ 4200 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Զանգվածային լրատվության մասին» և «Գովազդի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ամսագրի նյութերը վերատպվում են միայն իրավատիրոջ գրավոր համաձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին հղում կատարելը պարտադիր է:

«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման գաղափարը պատկանում է «Երևան Փրոդաքշն» ՓԲԸ-ին:

ՍԱՄ Էլիտ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Երևան, Սարյան 2 / Հեռ.՝ 098 70 30 03

Զրից

***

Ասեմ էս հարցի լուծումը որն ա. թողնել, գնալ սարեր, հեռախոսն անջատել ու նայել երկնքին: Իսկ ստեղ ինչքան ուզում են, թող իրար միս ուտեն, փոթեն, գոռան՝ էնքան, էնքանից էլ շատ:

***

Վախ, ինչ վաղուց չեմ եկել «Ստոպ», էսօր լավ բան կա՞, արժի մտնեմ... Դե լավ, մյուս շաբաթ կգնամ, ջահելությունս կհիշեմ:

***

Էս վերջերս մի հատ ռուս նստեց, դե ջոկեցի, որ ռուս ա, հարցրեցի, ասեց՝ դա, իզ Ռասիի, ես էլ ուրախացա, սկսեցի գովել իրանց երկիրը, Պուտինին, բան, ասեցի, որ բարեկամներ ունեմ, տուդասուդամ, մեկ էլ տեսնեմ՝ մի տեսակ ա նայում: Ձեն չհանեց, ես էլ հետո նոր ջոգեցի, որ էս սաղ ռուսները, որ եկել են, ոնց որ թե Պուտինին շատ չեն սիրում: Հարիֆ են էլի, ինչ ասես:

***

Ես մի բան գիտեմ. պատերազմը լավ բան չի: Ու ինչքան երկար ա տևում պատերազմը, էդքան ահավոր ա հետո լինում սաղի վիճակը՝ կապ չունի՝ կրողի, թե կրվողի: Էն էլ մեր էս գյոռմամիշ աշխարհում, որ կարող ա դու սկի կապ էլ չունենաս քո երկրով դրա հետ, բայց մեկ ա քո վրա նենց կանդրադառնա, որ էլ դու սուս: Ափսոս պատերազմ սկսողները չեն հասկանում էդքան բան:

***

Էս տաքսի քշելը շատ հաճելի գործ չի, բայց աչքերդ բացվում են: Ես, օրինակ, տասը տարի քշելով հասկացել եմ, որ էս ազգի մոտավորապես ութսուն տոկոսը հիմարներ են: Կարող ա 90-ը: Չգիտեմ՝ սենց ուր ենք հասնելու:

***

Լիշբի ինձ էքսան տարի ա հեչ պետք չի եղել սաղ զնակերը անգիր իմանալը: Քյարփինջը գիդեմ՝ լավ ա:

Ինչ անել

EVN Մեդիա Փառատոն

Մայիսի 27-29, Հայկարդ
մշակութային կենտրոն

Իր տեսակով առաջին փառատոնը Երևանում համախմբում է տեղական և միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ ընդգծելու հավաքական հիշողության և փորձառությունների արձանագրման գործում լրագրողների առանցքային դերը: Փառատոնը ներառում է պանելային քննարկումներ, զրույցներ, աշխատարաններ, պորտֆոլիոների խորհրդատվություններ, ցուցահանդեսներ և ֆիլմերի ցուցադրություններ: Հրաշալի հնարավորություն է մի քիչ խորանալու ժամանակակից մեդիայի անցուդարձի ու խնդիրների մեջ: Միջոցառումների մեծ մասի մուտքն ազատ է:

Լավ էլի ու Բամբիռ. «Երկու էրնեկ մի տեղ»

Հունիսի 3, Մարտիրոսյան համալիր

Հայկական ռոքի երկու առաջատարները մի քանի տարի առաջ միասին ցնցեցին կինո «Ռոսիան», հիմա նույն կազմով, բայց ավելի մեծ ծրագրով պատրաստվում են նույնն անել Համալիրի հետ: Առիթն էլ ավելին է, քան պարզապես երաժշտությունը. տոմսերի վաճառքից գոյացած գումարը կուղղվի Երեխաների առողջության հիմնադրամին, որը զբաղվում է քաղցկեղ և առողջական այլ ծանր խնդիրներ ունեցող երեխաների հարցերով: Համատեղ համերգային ծրագրում կհնչեն ինչպես հին, այնպես էլ՝ նոր երգեր: Խմբերը նաև խոստանում են որոշ անակնկալներ: Տոմսերի արժեքը՝ 5000-20000դր.:

Vsyo! Maladets, garoon a...

Մայիսի 28-29, Rambalkoshe

Միջոցառման վերնագիրը՝ Ռոբերտ Սահակյանցի ղեկավարած մուլտ-խմբի անդամների ֆիրմային արտահայտությունն է, որն օգտագործվում էր, երբ տեղի էր ունենում ցանկացած լավ բան: Vsyo! Maladets, garoon a...-ն կունենա երկու հիմնական բաղադրիչ: Առաջինը նվիրված է Ռոբի վաղ փորձարարական «Որսորդներին»: Կներկայացվի 10 րոպեանոց շլացուցիչ ֆիլմի՝ Դավիթ Ազարյանի գրած երաժշտության վերականգնված, մշակված տարբերակը (օրիգինալը, ավաղ, չի պահպանվել), իսկ նկարիչ Ռուբեն Մալայանը զրույց կստեղծի ֆիլմում օգտագործվող ենթագրերը: Մյուս բաժնում կներկայացվեն Սահակյանցի՝ 2000-ականներին արված երգիծանկարները, այդ թվում 18+ պիտակով շարքը, որը կտեղադրվի առանձին, փակ սենյակում:

Armenia Art Fair

Մայիսի 28-30, Երևան Էքսպո կենտրոն

Երկամյա ընդմիջումից հետո վերադառնում է Armenia Art Fair տոնավաճառը: Սա բացառիկ հնարավորություն է ժամանակակից արվեստով լուրջ հետաքրքրվողների համար ծանոթանալու տարածաշրջանի թրենդերին (մասնակիցների մեջ կլինեն արվեստագետներ ու ցուցասրահներ Սևծովյան, Կովկասյան, Մերձավոր Արևելքի երկրներից), մասնակցելու տարատեսակ հանդիպումներին ու գուցե մի բան գնելու. ի վերջո, AAF-ը հենց տոնավաճառ է, ոչ թե պարզապես ցուցահանդես:

ՀԱՅԱ փառատոն

Հունիսի 25, հուլիսի 1, 9, «Հրազդան» մարզադաշտ

2022 թվականի՝ առայժմ հայտնի ամենախոշոր աստղերով միջոցառումը Երևանում, անկասկած, ՀԱՅԱ փառատոնն է: Ամենամյա (այդպես են խոստանում կազմակերպիչները) ֆեստի երեք հեղլյուներներն են 50 Cent-ը, Զազն ու Led Zeppelin Symphonic-ը (հատուկ նշենք, որ վերջինս լեգենդար խմբի քավոր նախագիծն է, որտեղ ռոք սաունդը զուգակցվում է սիմֆոնիկ նվագախմբի հետ): Բոլոր երեք համերգները տեղի կունենան «Հրազդան» մարզադաշտում:

Նոր նստավայր

379 torch and brew, Հանրապետության 39

Նոր նստավայրի պաշտոնական ֆբ-էջում նկարագրությունն այսպիսին է. «Առեղծվածային ամրոց համեղ գարեջրի, մսի և ծովամթերքի սիրահարների համար»:
Համեղ գարեջրի մենյուն բաղկացած է տեղում պատրաստվող երեք տեսակներից՝ Pilsner, American Wheat Ale, Weizen: Մենյուի մի մեծ առանձին հատված նվիրված է գարեջրային խորտիկներին: Մսի ու ծովամթերքի տեսականին նույնպես լի է առաջարկներով: Կա նաև հատուկ լանչային մենյու (2000 դրամով): Ռեստորանում պարբերաբար անցկացվում են կենդանի համերգներ և խեցգետնի ու գարեջրի օրեր:

Նոր ծառայություն

EasyGarage

EasyPay ընկերությունը շարունակում է պարզեցնել կյանքը՝ օգտվելով վիրտուալ հնարավորություններից: Այս անգամ, easywallet հավելվածում առկա է նոր ծառայություն՝ «EasyGarage»-ը, որը հնարավորություն կտա վարորդներին կատարել մեքենայի հետ կապված ցանկացած վճարում՝ ԱՊՊԱ, կայանատեղի, տուգանքներ, ինչպես նաև հնարավորություն կստեղծի վարորդական իրավունք կցելու դեպքում հետևել բալերին: EasyGarage-ում մեքենայի հետ կապված բոլոր հարցերն ունեն իրենց պատասխանները:

Նոր գիրք

Եղիշե Չարենց «Գիրք Խանասարի», Անգարես

Եղիշե Չարենցի 125-ամյակի առիթով լույս է տեսել բանաստեղծի գուցե ամենանշանավոր աշխատանքներից մեկի՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուի առաջին բնագիրը: 1933 հրատարակված գիրքը շատ արագ արգելվել է, տպաքանակը վերացվել, ապա վերատպվել արդեն զգալի փոփոխություններով: Նոր հրատարակությունը լույս է տեսել Արքմենիկ Նիկողոսյանի աշխատասիրությամբ: Բացի այդ, հրատարակվել է նաև Նիկողոսյանի «Չարենց: Երեք ուսումնասիրություն» գիրքը, որտեղ ներկայացվում է գրականագետի՝ բազմաչարչար գրքի մեկնաբանությունը:



Թոմաս Փինչոն «Զգողության ծիածանը», Անգարես

Ոմանց համար այս գիրքն անընթեռնելի է, մյուսների համար՝ երբևէ գրված ամերիկյան մեծագույն վեպ: Համենայն դեպս, շուրջ 800 էջանոց «Զգողության ծիածանը» արտասովոր աշխատանք է, որը 70-ականներին ցնցել է գրական աշխարհն ու գրավել իր տեղը համաշխարհային գրականության դարակներում: Երկրորդ աշխարհամարտի տարիներին տեղի ունեցող վեպն ունի մի քանի հերոս, որոնք պետք է բացահայտեն V-2 հրթիռի համար մշակվող խորհրդավոր «սև սարքի» գաղտնիքը: Անգլերենից թարգմանությունը կատարել է Արտաշես Էմինը:

Սիգրան Ամիրյան «Շուշի. Ժպտիպտրեկներ»

Գրականագետ Տիգրան Ամիրյանը նախկինում ներկայացրել էր Երևանի Ֆիրդուս թաղամասի պատմությունը՝ բնակիչների բանավոր վկայությունների տեսքով, իսկ այժմ նույն մոտեցմամբ խոսում է կորսված Շուշիի մասին: Աշխատությունը ներկայացնում է պատումներ Շուշիի քաղաքային տարածության և առօրյայի մասին՝ հիմնվելով շուշեցիների անձնական ընկալումների և փորձառության վրա, որոնք ուսումնասիրվել են տրավմատիկ հիշողության ենթատեքստում: Գրքում տեղ են գտել հիշողությունը բազմակողմանիորեն վերլուծող հոդվածներ, հատվածներ շուշեցիների հետ արված հարցազրույցներից:

← Երևանի կոնյակի գործարանի գործադիր տնօրեն Սերգեյ Ռաչայրյանը

Մի ծառով գարուն կգա

Բնությունը սիրելը կարևոր է, բայց սերը լավ կլինի գործով ապացուցել: Օրինակ՝ ծառ տնկել: Գոնե մեկը: Երևանի կոնյակի գործարանում շատ լավ են գիտակցում, որ բնությանը ճիշտ վերաբերվելու դեպքում գարունը կգա ու կմնա: Այդպես, Հայաստանում կոնյակագործության հիմնադրման 135-ամյա հոբելյանի շրջանակում իրականացվեց ևս մեկ կանաչապատման ծրագիր. գործարանի հարակից այգում տնկվեցին տասնյակ նոր ծառեր: ԵՐԵՎԱՆն այնտեղ էր:

Ջերմ գարնանային ապրիլն այդ առավոտ հանկարծ վերափոխվեց ամպամած, զովաշունչ ապրիլի: Արդեն թվաց, թե վաղուց նախապատրաստած ծղոտե գլխարկները պետք է պաշտպանեին ոչ թե արևից, այլ անձրևից: Մինչ բարձրախոսներից հնչում են Առնո Բաբաջանյանի տաքուկ երևանյան մեղեդիները, Երևանի կոնյակի գործարանի մի քանի տասնյակ աշխատակիցները պարբերաբար նայում են երկնքին ու գնահատում անձրևի հնարավորությունները, իսկ կազմակերպիչները հեռախոսով անհանգիստ ստուգում են եղանակի կանխատեսումը:

«Ես դեռ երեկ ասացի, որ հանգիստ լինեն. քանի տարի է ծառատունկեր եմ կազմակերպում, ոչ մի անգամ անձրևը չի խանգարել, վատագույն դեպքում՝ կանգ է առել ու նորից սկսել է տեղալ, երբ գործն արված է եղել»,– շատ հանգիստ ասում է Երևան քաղաքի ավագանու անդամ, բժշկական գիտությունների թեկնածու Քրիստինա Վարդանյանը: Հենց նա է այսօրվա միջոցառման խորհրդատուն: Հարցիս, թե ինչպե՞ս են ընտրվել տնկվող ծառերը, ասում է՝ «տարիների փորձի հիման վրա»: Քրիստինան քսան տարուց ավելի է՝ զբաղվում է կանաչապատմամբ, իսկ 2019-ին հիմնադրել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը: «Կանաչապատումը շատ ավելին է, քան պարզապես տարածքի գեղեցկացում, սա արվում է և՛ աղմուկի պակասեցման համար, և՛ ջերմաստիճանի նվազեցման, և՛ օդի շարժման արագության փոփոխության...»,– թվարկում է Քրիստինան, մինչ գործարանի աշխատակիցները, բաժանվելով խմբերի, անցնում են գործի: Մեկը մյուսի հետևից իրենց համար նախատեսված տեղերում հայտնվում ու նոր տանն առաջին ջրային սնուցումն են ստանում եղևնիներ, թխկիներ, հուդայածառեր... «Կանաչապատումը միշտ պետք է հաշվի առնի և նրբացնի ճարտարապետության ընկալումը,– բացատրում է Քրիստինան՝ ձեռքը պարզելով դեպի

Good Times from a Good Place

Լինելով Պեռնո Ռիկար միջազգային խմբի անդամ՝ Երևանի կոնյակի գործարանն իր «Կայունություն և պատասխանատվություն» ռազմավարության շրջանակներում շարունակաբար իրագործում է «Good Times from a Good Place» հայեցակարգը, որը հիմնված է չորս կարևոր ուղղությունների վրա.

- *Բնության հանդեպ հոգատար վերաբերմունք*
- *Մարդկանց արժևորում*
- *Թափոնների և օժանդակ հումքի կայուն կառավարում (Շրջանաձև տնտեսության իմաստով)*
- *Պատասխանատու հյուրընկալություն*

Ծառատունկի համար բերվել են հուդայածառեր, թիսկիներ, եղևնիներ և այլ ծառատեսակներ

Հովհաննես Մարգարյանի նախագծած կառույցը,– օրինակ՝ տեսեք, դիմացի շարքում գնդաձև թփեր են՝ շեշտում են գործարանի կամարները»:
Մի խոսքով, ամեն ինչ մտածված է, ոչ մի պատահական բան չկա:
Աշխատակիցների հետ հավասար ծառատունկին մասնակցում է Երևանի կոնյակի գործարանի գործադիր տնօրեն Սերգեյ Խաչատրյանը:
Մի պահ, սակայն, ստիպված է թողնել դաշտային աշխատանքներն ու շփվել լրագրողների հետ:
Նախ և առաջ բացատրում է կոնյակագործության և շրջակա միջավայրի սերտ կապը. «Եթե չլիներ բնության առատաձեռնությունն ու հայկական հողի ջերմությունը, անհնար կլիներ կոնյակագործության հիմնադրումը դեռևս XIX դարում: Բնությունն է միակ աղբյուրը, առանց որի նույնիսկ ամենահմուտ մասնագետներն անզեն կլինեին իրենց ստեղծագործական որոնումներն իրագործելու հարցում: Հայկական կոնյակագործության հոբելյանական այս տարում մենք չէինք կարող չանդրադառնալ հատուկ մի նախագծի, որը խորհրդանշորեն արտացոլում է մեր երախտիքը բնության հանդեպ, չէ՞ որ բնապահպանական օրակարգը միշտ է եղել Երևանի կոնյակի գործարանի ուշադրության կենտրոնում»:
Եվ այսպես, ծառերը տնկվում են, Բաբաջանյանը հնչում է, անձրևը սպասում է... Մի քանի ժամից հոգնած, բայց իրենց արածով հպարտ աշխատակիցներն անցնում են հատուկ այս օրվա համար պատրաստված «Խմի՛ր ավելի շատ ջուր» բարը, որտեղ կարող են համտեսել ARARAT-ի՝ «զրո թափոն» սկզբունքով պատրաստված անկրկնելի կոկտեյլները:
Հայկական կոնյակագործության 135-ամյա հոբելյանը մնայուն գործով նշելու ավելի լավ տարբերակ, թերևս, դժվար էր պատկերացնել:
Անձրևը, ի դեպ, սկսեց ծուլորեն կաթել օրվա երկրորդ կեսին, երբ ամբողջ գործն արված էր, մարդիկ ծածկի տակ էին, նորատունկ ծառերը միայն երջանիկ էին, իսկ գարունը եկել էր, որ մնա:

Արեգ Դալթյան
Երևանի կոնյակի գործարան

PAUL-ը Հայաստանում.

Ֆրանսիական ապրելակերպի արվեստը

Մոտ ապագայում Աբովյան 8 հասցեում գտնվող Երևանի հնագույն շենքերից մեկը հյուրընկալելու է ֆրանսիական հանրահայտ PAUL ցանցի առաջին հայաստանյան սրճարանը: Այն «Գալաքսի» ընկերությունների խմբի կողմից հայտարարված խոշոր միջազգային նախագծերից է: ԵՐԵՎԱՆ-ը խոսել է նախագիծը Հայաստան բերող և իրագործող «Գալաքսիի» գլխավոր տնօրենի՝ բիզնես գործառնությունների գծով տեղակալ Էլինա Գաբրիելյանի հետ:

Եթե կյանքում առնվազն մեկ անգամ եղել եք PAUL ցանցի որևէ կետում և փորձել այնտեղի համեղագույն, խրթխրթան կրուասանները, խմորեղեններն ու անուշաբույր սուրճը, ուրեմն վստահաբար կիսում եք մեր ոգևորությունը. ցանցը գալիս է Հայաստան՝ իր հետ բերելով հարյուրամյա պատմության ընթացքում ձևավորված լավագույն ավանդույթները և, իհարկե, բաղադրատոմսերը:

Տեղի ու համի պատմությունները

Երևանում PAUL-ի տարածքի ընտրությունը պատահական չէ: Ի սկզբանե PAUL International ընկերության կողմից կային հստակ սահմանված պահանջներ տարածքի չափերի, մարդկային հոսքի ապահովման և այլ նրբությունների վերաբերյալ: Իր ժամանակին հայտնի վաճառական, հասարակական գործիչ Բարսեղ Եղիազարյանի՝ 1884 թվականին կառուցված տունն ամբողջությամբ համապատասխանում է Էյֆելյան աշտարակի տարեկից PAUL ցանցի պայմաններին:

Տարածքի դիզայներական ձևավորումն իրականացնում է ֆրանսիական Panetude ընկերությունը, որը PAUL բրենդը ներկայացնող Holder Group-ին պատկանող դիզայներական ստուդիան է և մշակում է ցանցի բոլոր կետերի համապատասխան հայեցակարգերը: Իսկ տեղայնացումը կատարում է արդեն հայկական Electric Architects նախագծային արվեստանոցը՝ շեշտադրելով շենքի ամբողջականության պահպանումը:
Մեկնարկային փուլում «Գալաքսի» ընկերությունների խմբի նախաձեռնությամբ շենքի պահպանման մասով հետազոտական աշխատանքներ են կատարվել, ներգրավվել են միջազգային մասնագետներ, ուսումնասիրվել են բազմաթիվ արխիվային նյութեր:
Էլինա Գաբրիելյանի կարծիքով հենց այս շենքը մեծ ներուժ ունի՝ Երևանում ստեղծելու տիպիկ փարիզյան սրճարանային մթնոլորտ: Առայժմ պակասում է միայն կրուասանների բույրը, որը հայտնվելուն պես գրավելու է անցորդներին:
Ի դեպ, երբ PAUL International-ի անձնակազմի մասնագետներից մեկը եկավ Հայաստան ու փորձեց այստեղի կրուասանները, ասաց, որ տեղացիները հարմարեցրել են բաղադրատոմսն իրենց քիմքին՝ մի փոքր կորցնելով «ֆրանսիական առոգանությունը»: PAUL-ում վերջինս պահպանվելու է. պատրաստվելու են դասական կրուասաններ, որոնք համտեսելով, գուցե պատահական լսեք նաև ակորդեոնի մեղեդին ու այն ձեզ տանի դեպի Սենի ափ:

L'art de vivre à la française

Էլինա Գաբրիելյանի խոսքով՝ «Գալաքսին» սերտորեն համագործակցում է PAUL International-ի թիմի հետ, որպեսզի հայ սպառողին հասցնի ցանցին բնորոշ, առանձնահատուկ ֆրանսիական փորձառությունը: Երկու կողմն էլ նախագծին մեծ պահանջկոտությամբ են վերաբերվում. հայաստանյան PAUL-ը որակապես չպետք է զիջի աշխարհի շուրջ 46 երկրներում գտնվող մյուս PAUL սրճարաններին, ավելին՝ պետք է գերազանցի:
«Մեր գործընկերները մեծ ուշադրություն են դարձնում ցանկացած մանրուքի: Առաջին պահանջներից մեկն է՝ պարտադիր ներկայացնել



← Ապագա Երևանյան PAUL-ը՝ Աբովյան 8-ում

← PAUL-ի առաջին բրենդավորված սրճարանը Լիլում, Ֆրանսիա

PAUL-ի ընդունված ճաշացանկը,– պատմում է Էլինա Գաբրիելյանը,– նաև կարևոր է, որ պահպանվի որակային մակարդակը, ընտրվի ճիշտ հումք: Դրա մի մասը, ի դեպ, գնվելու է հենց PAUL International-ից և ներկրվելու է Հայաստան»:

PAUL ցանցի ներկայացուցիչները նաև մեծ կարևորություն են տալիս աշխատակազմի որակավորմանը, պարտադիր պայմաններից է ապագա աշխատակիցների վերապատրաստումը հենց Ֆրանսիայում. նրանք պետք է հենց տեղում «խորասուզվեն» ֆրանսիական ապրելակերպի մշակույթի մեջ: Այնտեղից թիմն իր հետ կբերի խոհարարական նոր մոտեցումներ, գիտելիքներ ու փիլիսոփայություն, որը PAUL-ի կարևորագույն տարրերից է: «PAUL-ը միայն հացաբուլկեղենի մասին չէ, այն իր մեջ մի ամբողջ փիլիսոփայություն է կրում,– նշում է Էլինա Գաբրիելյանը,– չէ՞ որ լինելով ընտանեկան բիզնես՝ այն հիմնված է ավանդույթների և արժեքների պահպանման վրա»:

Եվ իրոք, PAUL-ը հիմնադրվել է հեռավոր 1889 թվականին որպես հացաբուլկեղենի խանութ, այնուհետև դարձել սրճարանային ոլորտի ամենամեծ ցանցերից մեկը: Ի դեպ, հիմնադիր ընտանիքի արդեն հինգերորդ սերունդը կառավարում է ցանցը՝ անմիջական մասնակցություն ունենալով բոլոր գործընթացներում:

Ապակենտրոնացում և ֆրանսիական խոհանոց

Ի լրումն հայաստանյան PAUL-ում սրճարանային մասի՝ գործելու է նաև ռեստորանային հատված, որտեղ ներկայացված կլինեն ֆրանսիական խոհանոցի նրբաճաշակ ուտեստներ: Նպատակը՝ համեղ սնունդ մատուցելուց զատ, հայ այցելուին ծանոթացնել նոր խոհանոցի և բոլորովին նոր մոտեցումների հետ:

Ի սկզբանե նախատեսվում էր գործարկել հինգ նման սրճարանային կետ Հայաստանի տարածքում, բայց բանակցությունների ընթացքում ավելացել են մի շարք այլ ձևաչափերի գաղափարներ: Դրանց շնորհիվ PAUL-ը կլինի ոչ միայն Երևանի կենտրոնում, այլ կտարածվի դեպի երկրի այլ քաղաքներ՝ նպաստելով համայնքային զարգացմանը: Իսկ նոր աշխատատեղերի ստեղծումը իր հերթին կնպաստի Հայաստանում սոցիալական խնդրի լուծմանը:

Էլինա Գաբրիելյանը նշում է, որ ցանկացած նոր նախագծից առաջ «Գալաքսին» ուսումնասիրում է տվյալ ոլորտը՝ փորձելով հասկանալ, թե հատկապես ինչ պահանջարկ կա: «Առհասարակ, մեր նախագծերը միշտ միտված են շուկայում առկա որևէ բաց լրացնելուն՝ միևնույն ժամանակ վերափոխելով տվյալ ոլորտն արդյունավետ և ինովատիվ լուծումներով. PAUL-ը բացառություն չէր,– ասում է նա:– Սրճարանային ցանցը Հայաստան բերելուց առաջ ուսումնասիրել ենք ոլորտն ու հասկացել՝ բաց կա ցանցային հացաբուլկեղենի խանութ-սրճարանների ոլորտում: Միջազգային մասնագետները ևս ուսումնասիրություններ կատարեցին, և եկանք վերջնական որոշման՝ PAUL-ը պետք է գա Հայաստան»:

Մարգարիտ Միրզոյան
«Գալաքսի» ընկերությունների խումբ

ՀԱՅԿԱԿԱՆԸ ՆՈՐԱՁԵՎ Է

«Նորաձևության և դիզայնի պալատ» ՀԿ-ի նախագահ, դիզայներ Վահան Խաչատրյանը և ՀԿ-ի համահիմնադիր Էլեն Մանուկյանը ԵՐԵՎԱՆԻՆ պատմել են հայաստանյան նորաձևության ներկայի մասին:

Հոդվածը գրվել է «Տնտեսական հնարավորություններ՝ Արևելյան գործընկերության երկրներում տեքստիլի ոլորտում մրցունակության և կայունության բարձրացման միջոցով» ծրագրի շրջանակներում Շվեդիայի Միջազգային Զարգացման Համագործակցության Գործակալության Reconomy տարածաշրջանային ներառական և կանաչ տնտեսական զարգացման ծրագրի և HELVETAS Շվեյցարական միջհամագործակցության աջակցությամբ:

Հայաստանի հետ աշխատում են բազմաթիվ օտարերկրյա ընկերություններ

Վերջին տարիներին հայկական նորաձևությունը զգալի զարգացում է ապրել՝ ճանաչելի և հասանելի դառնալով հասարակ սպառողի համար, ինչն ընդամենը մեկ տասնամյակ առաջ կարող էր անիրական թվալ: Վերջին շրջանում հայ դիզայներների աշխատանքները մարդկանց զգեստապահարանի անբաժան մասն են դարձել, իսկ տեքստիլ գործարանները շարունակաբար ներդնում են նոր մոտեցումներ, տեխնոլոգիաներ ու միջազգային փորձ:

Արտադրող ընկերություններն ամեն ամիս ավելացնում են իրենց աշխատատեղերը ոչ թե հինգով կամ տասով, այլ մի քանի տասնյակներով: Աճել են նաև արտահանման տեմպերը: Նույնիսկ կան հայկական ընկերություններ, որոնք աշխատում են միայն միջազգային շուկաների հետ: «Առաջին հայացքից կարող է թվալ, որ արտահանումը և միջազգային գործընկերների հետ աշխատանքը ծառայում է միայն ֆինանսական նպատակների,– ասում է Էլեն Մանուկյանը,– բայց այն նաև հնարավորություն է տալիս գործարաններին վերապատրաստել իրենց աշխատակիցներին, բարձրացնել արտադրողականությունը և ներդնել լավագույն միջազգային փորձը»:

Յուրաքանչյուր միջազգային պատվերի հետ գալիս է նաև համապատասխան անձնակազմ, որը վերահսկում է արտադրանքի որակը և ընթացքում սովորեցնում տեղական թիմին աշխատել նոր ոճով ու որակով: Այս աշխատակիցները, մնալով Հայաստանում, նպաստում են հայկական տեքստիլ ոլորտի զարգացմանը՝ ստեղծելով նոր հնարավորություններ արտադրողների համար՝ էլ ավելի մեծաքանակ և բարդ պատվերներ ընդունելու տեսանկյունից:

Այս պահի դրությամբ Հայաստանում գործում է շուրջ 30 խոշոր գործարան, որոնցից յուրաքանչյուրն ունի 200-ից մինչև 1000 և ավելի աշխատատեղ: Այս գործարանների մեծ մասը գտնվում է մարզերում, ինչն էլ իր հերթին տանում է ավելի լայն արդյունքների, ոլորտի ապակենտրոնացմանն ու մարզային զարգացմանը:

Գլխավոր խնդիրը համապատասխան աշխատուժի պակասն է

Թեև կա պահանջարկ, բայց առկա է հմտությունների, գիտելիքների ու մասնագետների պակաս: Վահան Խաչատրյանը վստահ է, որ խնդիրն այստեղ նաև գործատուի և կրթական հաստատությունների միջև երկխոսության պակասն է: «Այդ կապը հաստատելու նպատակով մենք այցելել ենք կրթական հաստատություններ, փորձել կապեր ստեղծել, կատարել հարցումներ կարիքների վերաբերյալ ու տրամադրել այդ ինֆորմացիան պետությանն ու գործատուներին»,– ասում է նա: Մասնագետների պակասը զգալի ազդեցություն է ունենում ոչ միայն գործարանների, այլև հենց դիզայներների վրա: Նրանցից շատերը չեն կարողանում արագ զարգանալ, քանի որ արտադրանքի ստեղծման բոլոր էտապներն ինքնուրույն են անում, նույնիսկ եթե չունեն համապատասխան գիտելիքներ:

Փորձելով լրացնել առկա բացերը՝ ՀԿ-ն պարբերաբար վերապատրաստման ծրագրեր է իրականացնում դիզայներների համար: Նրանց սովորեցնում ենք բիզնես հմտություններ, սոցիալական հարթակների ճիշտ կառավարում, ֆինանսական գիտելիքներ, կառավարում և նման այլ գիտելիքներ, որոնք այլ պայմաններում առանձին մասնագետների աշխատանքի տիրույթում կլինեին:

Խոշոր գործարանները սկսել են աշխատել հայ դիզայներների հետ

Նախկինում գործարանները հրաժարվում էին աշխատել հայ դիզայներների հետ՝ պարզաբանելով, որ պատվերները փոքրաքանակ են և ֆինանսական տեսանկյունից ոչ եկամտաբեր: Բայց այսօր «Նորաձևության և դիզայնի պալատի» թիմի խոսքով՝ այս խոչընդոտը հաղթահարված է և շատ դիզայներներ ակտիվ համագործակցում են գործարանների հետ, քանի որ հաջողվել է ձևավորել այն գաղափարախոսությունը, որ դրանով նրանք նպաստում են հայկական նորաձևության պահանջարկի ավելացմանը և «Արտադրված է Հայաստանում» բրենդի կայացմանը:

Այս ընթացքում նաև աշխատանք է տարվում կառավարության հետ, մշակվում է տեքստիլի զարգացման հնգամյա ռազմավարություն: Վերջինս հիմնված է ոչ միայն աշխատատեղերի ավելացման, այլև հավելյալ արժեքի ստեղծման վրա, որի հիմքում ընկած է աշխատավարձի, որակյալ արտադրանքի բարդության և արտադրողականության բարձրացումը:

Մարգարիտ Միրզոյան
Առնոս Մարտիրոսյան

ՎԻՇԱՊՈՒԲԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ



Նոր հայկական ֆենթըզի վեպ՝ մեր կողքին ապրող վաղնջական առասպելական էակների մասին

Երևանի բոլոր գրախանութներում

գինը՝ 4990 դրամ

Հենց այսպես էլ ապրում ենք՝ ըստ Սովկասյան բարոմետրի

Սպասելիքներս էին, որ հայաստանցիները որպես իրենց գլխավոր հարևան ամենաշատը չէին ուզենա տեսնել նույնասեռականների (25.4%), հետո միայն՝ թմրամոլների (24.1%) ու հանցագործների (18.5%): Պատմում ենք Սովկասյան բարոմետրի այս և բազում այլ կարևոր թվերի մասին, որոնց միջոցով կարելի է ավելի լավ ճանաչել մեր հասարակությանը:



Սա վերաբերում է բոլորին

Քչերն են իրականությանը նայում հետազոտողի աչքերով: Երբ հարևանից կամ ընկերոջից ու նույնիսկ լրատվամիջոցից ինչ-որ բան ես լսում, մի պահ կանգ ես առնում ու մտածում. «Բայց արդյո՞ք սա վերաբերում է բոլորին, արդյո՞ք սա ամբողջ հասարակության մասին է, թե՞ պարզապես տեսակետ կամ մասնավոր դեպք է»: Հասարակության մասին հետազոտական տվյալներից չես դադարում զարմանալ: Դրանք հանրության հետ «խոսում են» գիտությամբ հիմնավորված լեզվով՝ ցույց տալով, թե իրականում ով ենք մենք, ինչպես ենք տեսնում ինքներս մեզ, մեր իրականությունը, մեր առօրյան: Այս հոդվածը գրված է շատ հետաքրքիր հետազոտության՝ Սովկասյան բարոմետրի տվյալների հիման վրա: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանը Սովկասյան բարոմետրն իրականացնում է 2004 թվականից: Այս տարի Հայաստանում հարցմանը մասնակցել է 1648 հայաստանցի այնպիսի ընտրանքով, որը ներկայացնում է ամբողջ Հայաստանի պատկերը:

Նշված մարդկանցից ո՞ւմ ամենաշատը չէիք ուզենա տեսնել որպես Ձեր հարևան:



Ինչ է մեզ պատմում Սովկասյան բարոմետրը

Պետության հետ մեր հարաբերությունները հեղափոխությունից հետո բավական դինամիկ են: Օրինակ՝ կարծում ենք, որ ինքներս ենք որոշում մեր ճակատագիրը: Միևնույն ժամանակ, մեր 67,7%-ը կարծում է, որ մարդիկ երեխաների պես են, ու պետությունը պետք է ծնողի պես հոգ տանի մեր մասին: Հայաստանցիների ընդամենը 25,5%-ն է համաձայն, որ պետությունը (պետապարատը) մեր վարձու աշխատողն է, ու մենք պետք է տիրոջ նման վերահսկենք այն: Այստեղ զուցե իր «գործն» է անում մեր խորհրդային անցյալը, որի փլուզումը, մեր 67%-ի կարծիքով, վատ իրադարձություն էր:

Մի քիչ էլ քաղաքականությունից խոսենք. ո՞նց կարող էր Հայաստանում որևէ զրույց չհանգել այդ թեմային: Այս հարցում բոլորս շատ խառը մտքեր ունենք: Հեղափոխությունից հետո բավական ակտիվ են քաղաքական թեմաներով քննարկումները: Մեկ հանդիպում ես մարդու, որն ասում է՝ ամեն ինչ այնքան էլ վատ չէ, մեկ էլ ուրիշի, ում կարծիքով ամեն ինչ ուղղակի անտանելի վատ է: Այս վերջինը մի փոքր բոլորս ենք, հատկապես՝ երկուշաբթի օրերին:

Ըստ Ձեզ՝ Խորհրդային միության փլուզումը Հայաստանի համար դրական էր, թե՞ բացասական:



Ինչ է իրականում մտածում հայաստանյան հասարակությունը

Ուրեմն, մեր 40%-ի կարծիքով՝ երկրի ներքին քաղաքականությունը սխալ ուղղությամբ է ընթանում: Եթե 2018 թ. հեղափոխությունից հետո մարդկանց 67%-ը համարում էր, որ մեր ներքին քաղաքականության ուղղությունը ճիշտ է, ապա 2021-ին գրեթե վերադարձել ենք այնտեղ, որտեղից սկսել էինք. ներքաղաքական ուղղությանը հավանություն է տալիս հայաստանցիների ընդամենը 17%-ը (2017-ին այս ցուցանիշը 8%-էր):

Նախորդ տարիների համեմատ մենք կորցրել ենք վստահությունը լրատվամիջոցների, կառավարության, Ազգային ժողովի ու դատարանների նկատմամբ: Ավելի շատ ենք վստահում Մարդու իրավունքների պաշտպանին (հիշեցնենք, որ հարցման ժամանակահատվածում



պաշտոնավարում էր Արման Թաթոյանը) ու Եվրամիությանը: Լրատվամիջոցներն այս տարվա ամենաանվստահելի ինստիտուտն են՝ 69%-ը չի վստահում, ու Բարոմետրի պատմության մեջ առաջին անգամ է նման ցուցանիշ գրանցվում: Անվստահության հիմնական պատճառներն այն են, որ, մեր կարծիքով, լրատվամիջոցներն ուզում են մարդկանց մոլորեցնել (34%), որ դրանք հետևում են որևէ քաղաքական օրակարգի (23%), կամ որ պարզապես «քլիքեր» են հավաքում սոցիալական հարթակներում (20%):

Հետաքրքիր է, որ մարդիկ սկսել են ավելի շատ վստահել քաղաքական կուսակցություններին (40%) (առողջապահական ու կրթական համակարգերից հետո), գուցե որովհետև համընդհանուր անվստահության ֆոնին որևէ նոր քաղաքական ո՞ւժ ենք փնտրում: Տեսնո՞ւմ եք՝ ինչ օպտիմիստ ենք:

Նսիկիններ ու ներկաներ մասին

Հայաստանցիները կարծում են, որ Լևոն Տեր-Պետրոսյանի ժամանակաշրջանի հիմնական հաջողություններն Արցախյան առաջին պատերազմում հաղթանակը (20%) և Հայաստանի անկախացումն ու միջազգային ճանաչումն (15%) են: Ռոբերտ Քոչարյանի ժամանակաշրջանի հիմնական հաջողությունը, ըստ 25%-ի, տնտեսական աճն էր: Սերժ Սարգսյանի ժամանակաշրջանը, ըստ հարցվածների, գրեթե հաջողություններ չի բերել (54%): Իսկ Փաշինյանի ժամանակաշրջա՞նը. կոռուպցիայի նվազեցումը և Հայաստանին ժողովրդավար դառնալու հույս տալը հայաստանցիները համարում են հիմնական երկու հաջողությունները (10-ական %), բայց 54%-ը հիշատակում է պատերազմը տանուլ տալը:

Այս թվերից հետո զարմանալի չէ, որ հարցվածների կեսից ավելին կարծում է, թե մարդիկ պետք է մասնակցեն իշխանության դեմ բողոքի ակցիաների: Միաժամանակ, 80%-ի կարծիքով քաղաքականությունն ու կառավարումն այնքան խճճված են, որ մեզ պես մարդիկ չեն կարող հասկանալ, թե իրականում ինչ է կատարվում:

Առհասարակ, մեր ընդհանուր մոտեցումներից ակնհայտ է, որ մենք հետպատերազմյան որոշակի ընկճված մթնոլորտում ենք. առաջին անգամ երկրում գլխավոր խնդիրը խաղաղության բացակայությունն է համարվել (42%): Չնայած դրան՝ մեր 78%-ը լավատես է ապագայի հարցում, բայց կարևոր է նշել, որ մարդիկ ավելի լավատես են իրենց անձնական ապագայի հանդեպ (73%), այն էլ՝ երբ ավելի երիտասարդ տարիքում են: Դե իսկ 70%-ն էլ չի ցանկանում լքել երկիրը:

Արցախյան հարցը՝ ուշադրության կենտրոնում

Արցախյան հարցը մեր ուշադրության կենտրոնում է, բայց չունենք համընդհանուր համաձայնություն անվտանգության տարբեր համակարգերին անդամակցելու, մեր ինքնավարության, անվտանգության հետ կապված: Զարմացած չեք, չէ՞: Ռուսաստանի նկատմամբ մեր վստահությունը պարբերաբար ընկնում է. այն 2013 թվականի 83%-ից արդեն դարձել է 35% 2021-ին: ՆԱՏՕ-ին Հայաստանի անդամակցմանը կողմ է հարցվածների 29%-ը, Եվրամիությանը՝ 30%-ը, ԵԱՏՄ-ին՝ 26%-ը:

Կարևորը՝ հասկանալ

Հոգնեցի՞ք թվերից: Էլ չենք տանջի, բայց այս ամենը Բարոմետրի 10%-ն էլ չէր: Կարևոր է ոչ միայն կողմնորոշվել, թե որն է անձամբ մեր դիրքորոշումն այս կամ այն սոցիալական, մշակութային կամ քաղաքական հարցում, այլ նաև փորձել հասկանալ ամբողջ հասարակության տրամադրությունը: Այս թվերը պետք է ուղենիշ լինեն թե՛ յուրաքանչյուրիս, թե՛ բիզնեսի, հասարակական կազմակերպությունների, պետական ինստիտուտների և քաղաքական դաշտի համար: Իսկ ՀՌԿԿ-Հայաստանը խոստանում է պարբերաբար զարմացնել, տխրեցնել, ուրախացնել և երբեմն էլ առավոտյան սուրճի արարողության ընթացքում զբաղեցնել ձեզ հետաքրքիր տվյալներով:

Սոնա Բալասանյան
Հեղափոխական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ

30 ՊԱՏՃԱՌ ԾԽԵԼԸ ԹՈՂՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ աշխարհում ծխելու հետևանքով ավելի շատ մարդ է մահանում, քան ՁԻԱՀ-ից, մալարիայից և տուբերկուլոզից միասին վերցրած: Համաձայն Հայաստանում Ծխախոտի դեմ պայքարի ներդրումային հետազոտության՝ ամեն տարի ծխախոտը սպանում է Հայաստանի ավելի քան 5,500 բնակչի, որը երկրում բոլոր մահերի գրեթե 20%-ն է: Ծխախոտից հրաժարվելը կարող է դժվար լինել, բայց ծխելը թողնելու բազմաթիվ պատճառներ կան: Դեռ մտածո՞ւմ ես. Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ներկայացնում է ծխելը թողնելու 30 պատճառ:

Ծխելը գրեթե անմիջապես ազդում է քո արտաքինի վրա

1. Ամեն ինչից տհաճ հոտ է գալիս. մաշկից, տնից, հագուստից, մատներից ու բերանից:

2. Ծխելը վաղաժամ ծերացնում է մաշկը՝ ազդելով մաշկին առաձգականություն տվող սպիտակուցների վրա՝ զրկելով մաշկը վիտամին A-ից և սահմանափակելով արյան հոսքը:

3. Ծխելու հետևանքով դեղնում են ատամները և ատամնափառ է առաջանում:

4. Ծխելը մեծացնում է պսորիազի՝ մաշկի ոչ վարակիչ բորբոքային վիճակի զարգացման հավանականությունը, որը թողնում է թարախակալված բշտիկներ և կամ կարմիր բծեր ամբողջ մարմնի վրա:

Ծխելը ազդում է վերարտադրողական առողջության վրա

5. Ծխողների մոտ անպտղության հավանականությունն ավելի մեծ է: Ծխելը թողնելը նվազեցնում է անպտղության հավանականությունը, վաղաժամ ծննդաբերության, ցածր քաշով երեխաներ ունենալու և հղիության վաղաժամ ընդհատման հավանականությունը:

6. Ծխախոտի օգտագործումը մեծացնում է էրեկտիլ խանգարման ռիսկը: Նիկոտինն ազդում է դեպի սեռական օրգաններ արյան հոսքի վրա՝ ստեղծելով էրեկցիայի հասնելու անկարողություն:

7. Ծխելը ազդում է տղամարդկանց սերմնաբջիջների քանակի, շարժունակության ու ձևի վրա:

Ծխախոտի բոլոր ձևերը մահացու են

8. Ծխախոտը սպանում է ծխողների կեսին: Ծխախոտի ցանկացած ձևի օգտագործումը խլում է քո առողջությունը և առաջացնում ծանր հիվանդություններ:

9. Նարգիլե ծխելը նույնքան վնասակար է, որքան ծխախոտի այլ ձևեր:

10. Ծխախոտ ծամելը կարող է առաջացնել բերանի քաղցկեղ, հանգեցնել ատամների կորստի, շագանակագույն ատամների, սպիտակ բծերի և լնդերի հիվանդության:

11. Անծուխ ծխախոտի նիկոտինն ավելի հեշտությամբ է կլանվում, քան ծխախոտ ծխելը՝ բարձրացնելով դրանից կախվածությունը:

Հղումներ՝

- *Առողջության համաշխարհային կազմակերպության զեկույցը ծխախոտի համաշխարհային համաճարակի վերաբերյալ, 2019:*
- *Հայաստանում ԱՀԿ ԾՊՇԿ-ի իրականացման ներդրոմային հետազոտություն, նոյեմբեր 2021, ՀՀ առողջապահության նախարարություն, «RTI International», Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր, ԱՀԿ ԾՊՇԿ-ի Քարտուղարություն, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն:*

12. Տաքացվող ծխախոտը նույնպիսի ծխախոտային արտադրանք է. օգտագործողները ենթարկվում են թունավոր արտանետումների վտանգի, որոնցից շատերը կարող են քաղցկեղածին լինել:

Ծխելը քեզ շնչահեղձ է անում

13. Ծխողների մոտ թոքերի քաղցկեղը հանդիպում է 22 անգամ ավելի հաճախ, քան չծխողների մոտ: Ծխախոտ ծխելը թոքերի քաղցկեղի հիմնական պատճառն է, որը հանգեցնում է թոքերի քաղցկեղով տառապող մարդկանց ավելի քան երկու երրորդի մահվան:

14. Յուրաքանչյուր հինգերորդ ծխողի մոտ կյանքի ընթացքում կզարգանա թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն: Սա հատկապես հավանական է այն մարդկանց մոտ, ովքեր ծխել սկսել են մանկության և պատանեկության տարիներին, քանի որ ծխախոտի ծուխը զգալիորեն դանդաղեցնում է թոքերի աճն ու զարգացումը:

Ծխելը ազդում է սիրտ-անոթային համակարգի վրա

15. Օրական ընդամենը մի քանի անգամ ծխելը, հազվադեպ ծխելը կամ երկրորդային ծխի ազդեցությունը մեծացնում են սրտային հիվանդությունների զարգացման հավանականությունը:

16. Ծխողների մոտ կաթվածի ռիսկը երկու անգամ և սրտային հիվանդությունների ռիսկը քառակի անգամ մեծ է:

17. Ծխախոտի ծուխը վնասում է զարկերակները՝ առաջացնելով աթերոսկլերոտիկ վահանիկների կուտակումներ՝ դրանով իսկ սահմանափակելով արյան հոսքը և, ի վերջո, հանգեցնելով կաթվածների:

18. Նիկոտինի և ծխախոտային արտադրանքի օգտագործումը մեծացնում է սրտանոթային հիվանդությունների առաջացման հավանականությունը:

ԱՄԵՆ ՏԱՐԻ ԾԽԱԽՈՏԸ ՍՊԱՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ 5,500 ԲՆԱԿՉԻ, ՈՐԸ ԵՐԿՐՈՒՄ ԲՈԼՈՐ ՄԱՀԵՐԻ ԳՐԵԹԵ 20%-Ն Է

Ծխախոտն առաջացնում է քաղցկեղի ավելի քան 20 տեսակ

19. Ծխախոտի օգտագործումը աշխարհում քաղցկեղից բոլոր մահացության դեպքերի 25%-ի պատճառն է:

20. Ծխախոտի և անծուխ ծխախոտի օգտագործումը հանգեցնում են բերանի խոռոչի շրթունքների, կոկորդի և կերակրափողի քաղցկեղ:

21. Ծխող մարդիկ սուր լեյկոզի, քթի խոռոչի և պարանազալ սինուսի, աղիքի, երիկամների, լյարդի, ենթաստամոքսային գեղձի, ստամոքսի, ձվարանների և ստորին միզուղիների քաղցկեղի առաջացման զգալիորեն ավելի բարձր ռիսկի են ենթարկվում:

22. Որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ կապ կա ծխելու և կրծքագեղձի քաղցկեղի բարձր ռիսկի միջև, մասնավորապես մոլի ծխողների և առաջին հղիությունից առաջ ծխել սկսած կանանց դեպքում:

23. Ամբողջ կյանքում ծխողները միջինում կորցնում են առնվազն 10 տարի իրենց կյանքից:

Ծխելը թողնելու օգուտները նկատելի են գրեթե անմիջապես

24. 20 րոպեի ընթացքում կարգավորվում են զարկերակային արյան ճնշումն ու սրտի զարկերի հաճախականությունը:

25. 12 ժամվա ընթացքում կայունանում է զարկերակային արյան մեջ ածխաթթու գազի մակարդակը:

26. 2-12 շաբաթվա ընթացքում բարելավվում է արյան շրջանառությունը և թոքերի ֆունկցիան:

27. 1-9 ամսվա ընթացքում նվազում է շնչահեղձությունը, հևոցը և հազը:

28. Ծխելը թողնելուց մեկ տարի անց սրտի իշեմիկ հիվանդության զարգացման ռիսկը կիսով չափ նվազում է:

29. Ծխելը թողնելուց 5-15 տարի անց կաթվածի զարգացման ռիսկը նվազում է՝ հասնելով չծխողի առողջական վիճակին:

30. Ծխելը թողնելուց 10 տարի անց քթի, բերանի խոռոչի, լեզվի, կերակրափողի, միզապարկի, արգանդի վզիկի և ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի զարգացման ռիսկը նվազում է երկու անգամ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

Հրաժեշտ Մոսկվային

ԵՐԵՎԱՆԻ ինդրանիթով դիպաբան-հրապարակախոս Միխայել Զոլյանը պատմել է, թե ինչպես էր ապրում իրեն ծանոթ Մոսկվան՝ Ուկրաինայում պատերազմի առաջին օրերի ընթացքում, և ինչպես էին հարյուրավոր մոսկվացիներ իր հետ ուղևորվում Երևան՝ Նոյյան կապան հիշեցնող ինքնաթիռով:

А мир говорит:
Как ты можешь быть так спокоен?
Надвигается шторм, который
Разорвет саму суть бытия.

А я, говорю:
Мир, ты не понял:
Да, надвигается шторм.
Шторм — это я.

Борис Гребенщиков, «Не Судьба»

Ես գործերով պետք է գնայի Մոսկվա, բայց ուղևորությունն անընդհատ հետաձգվում էր: Վերջապես տեղ հասա, երբ Ուկրաինայում պատերազմի սկզբից մի շաբաթ էր անցել: «Վախտ ես գտել գնալու», ասում էին ընկերներս: «Դե ոչինչ, զատոմարտի մեկին եմ գնում», ասում էի ես: Ու բացատրում էի, որ այս տարի այդ օրն էր ընկնում Մահա Շիվարատրին՝ ինդուիզմի մեջ Շիվա աստծո տոնը: Այդ օրն ինձ ոչինչ չի կարող պատահել, ասում էի ես, իբր կատակով, բայց հոգու խորքում գիտեի, որ այդպես էլ կա:

Այն որ պատերազմն Ուկրաինայում անխուսափելի է, ես հասկացել էի դեռ հունվարին: Ռուս ընկերներիս տանը հանդիպել էի մի տղայի, ով ռազմական թղթակից էր, նոր էր վերադարձել Ղազախստանից: Բեղավոր և ակնոցավոր տղան, տեսքից տիպիկ մոսկվացի հիփսթեր, պատմում էր, թե ինչ ահավոր էր տեսնել տեղի ունեցածի հետևանքները՝ այրված տներ, դիակներ փողոցում: Հետո անցանք Ուկրաինային: Միանգամից հարցրեցի ամենակարևորի մասին. «Будет война?»: «Да», առանց հապաղելու պատասխանեց նա, և ինքն էլ վախեցավ իր վստահությունից: «Ну не знаю, трудно сказать»[1], փորձեց ինքն իրեն համոզել: Հետո բացատրեց, որ հենց դրա պատճառով գինի է խմում, որ մոռանա այդ ամեն ինչի մասին, և դիմեց ընկերուհուն, ով ինձ հարցուփորձ էր անում Շրի Լանկայի տուրիստական արժանիքների մասին, «Пойдем домой, а?»: «Можно тебя обнять?»,– հարցրեցի տխուր տղային և նրա լավատես ընկերուհուն: Էլ ի՞նչ կարող էի անել նրանց համար:

Փետրվարի 23-ի գիշերը ոչ մի կերպ չէի կարողանում քնել: Ընդհանրապես ես լավ եմ քնում: Բայց այս անգամ չէր ստացվում: Նման բան եղել էր երկու տարի առաջ՝ սեպտեմբերի 26-ի լույս 27-ի գիշերը: Այն ժամանակ քնեցի միայն առավոտվա վեցին-յոթին, և մի երկու ժամից արթնացա, քանի որ հեռախոսս անընդհատ դռռում էր: Բացեցի Տելեգրամը և իմացա, որ պատերազմ է սկսվել: Հետո ծանոթներիցս շատերն էին ասում, որ այդ գիշերը չէին քնել: Այս անգամ հաջողվեց քնել ժամը 3-4-ին: Երբ արթնացա ու իմացա, որ Ուկրաինայում պատերազմ է սկսվել, մի տեսակ արդեն էլ չզարմացա:



1 - Պատերազմ կլինի՞:
- Հա: Դե, չգիտեմ, դժվար է ասել:

***

Ինքնաթիռը հսկայական, կիսադատարկ «բոինգ» էր: Պատերազմի պատճառով Ռուսաստանի հարավի օդային տարածքը փակ էր, և մենք թռնելու էինք երկար ճանապարհով՝ Կասպից ծովի և Ղազախստանի տափաստանների վրայով: Ես նստած էի պատուհանի մոտ, լսում էի հեռախոսիս երաժշտությունը և հիանում տեսարաններով: «So, so you think you can tell heaven from hell?»,– հարցրեց ինձ Մասիսը Գիլմորի ձայնով, երբ ինքնաթիռը պոկվեց գետնից: «Here Comes the Sun»,– ավետեց Ջորջ Հարիսոնը, երբ ինքնաթիռը բարձրացավ ամպերից վերև և արևի շողերը պատեցին երկինքը: «For slavery fled, o glorious dead, when you fell in the foggy dew»,– Շինեդ Օ'Քոննորի ձայնով երգում էին Կովկասյան լեռներն իռլանդական ազգային-ազատագրական մի հին երգ: Հետո բերեցին նախաճաշը, և սկսվեցին Կասպից ծովն ու ղազախական տափաստանները:

Մոսկվայում առաջին իսկ պահից տարօրինակ զգացում ունեի: Սկզբից չէի հասկանում, թե ինչ է, հետո հասկացա: Ստալինի օրոք Խորհրդային Միության կարգախոսներից էր «Կառուցենք սոցիալիզմ առանձին վերցրած երկրում»: Հիմա էլ այնպիսի տպավորություն էր, որ սոցիալիզմի փոխարեն առանձին վերցրած երկրում աշխարհի վերջն է պատրաստվում:



Իհարկե, այս աշխարհի վերջը, ինչպես և վայել է քսանմեկերորդ դարին, վիրտուալ և թվային էր: Փողոցներում ամեն ինչ նորմալ էր, միայն մարդիկ և մեքենաներն են սովորականից մի փոքր քիչ, մեկ էլ շատ էին փակված «օբյեկտները» (բայց դե դա էլ երևի քովիդի հետևանքն էր): Բայց հենց մտնում էիր ինտերնետ, աշխարհի վերջի նախանշաններն ակնհայտ էին դառնում: Ամեն ժամ նորություններ էին գալիս այն մասին, որ Արևմուտքը նոր պատժամիջոցներ է սահմանել, որ այսինչ ընկերությունը թողնում է Ռուսաստանը, կամ որ այլևս հասանելի չէ այս կայքը կամ այն սոցիալական ցանցը: Դե էլ չեմ ասում, որ «ռուս-ուկրաինական մարտերը Խարկովի մատույցներում» վերնագրերն ապոկալիպտիկ հակաուտոպիայի ժանրից էին թվում:
Ֆեյսբուքը սկզբից վատ էր աշխատում, հետո ընդհանրապես անջատվեց, միայն «մեսենջերն» էր աշխատում, այն էլ՝ օրը մի ժամ: Չգիտես ինչու, ֆեյսբուքը սկսում էր աշխատել միայն Սթարբաքսներում: Երևի ամերիկյան շպիոններին այդպես էր հարմար, ենթադրեցի ես: Մի փոքր ավելի լավ էր աշխատում Տելեգրամը: Երբ միանում էին սոցցանցները, տեսնում էի, որ ինձ գրում են իմ ռուս ընկերները, հարցեր տալիս Հայաստանից, որոնց պատասխանները ես չգիտեի: Դե, օրինակ, ես որտեղի՞ց իմանամ, թե ինչ փաստաթղթեր են հարկավոր շունիկին, որին ինքնաթիռով բերում են Երևան և հետո մեքենայով տանում Թբիլիսի:

***

Առաջին իսկ օրը գնացի իմ սիրած Փրայմ ցանցի սրճարան, որ ուտեմ իմ սիրելի սաղմոնով ռոլը: Հայկական բանկի քարտս չաշխատեց: Շեկ, կլոր դեմքով ակնոցավոր աղջիկը հուսալքված ձայնով ասաց «ваша карта не работает, наверно потому что она не российская»[3]: Քանի որ ես կանխատեսել էի այդ իրավիճակը, վճարեցի դեռ Երևանում գնված ռուբլիներով: «Заходите еще», ասաց աղջիկը նույնքան ողբերգական տոնով: Ես բարձրաձայն խոստացա, որ կմտնեմ, բայց մտքումս ինքս ինձ ասացի, որ իրականում չեմ խոստանում: Որոշեցի առնել ռուսական սիմ-քարտ, որ հեռախոսով ինտերնետ մտնեմ: Ամեն ինչ արեցի, ինչպես պետք էր, բայց ինտերնետը չմիացավ: «Странно»,– նկատեց վաճառողը: «Сейчас так часто бывает»,– բացատրեց նրա ընկերը,– «через пару часов заработает»[4]: Սիմ-քարտն իրոք սկսեց աշխատել, բայց հաջորդ օրը:
Մարդկանց հետ խոսակցությունները շատ տարբեր էին: «Ամեն ինչ ճիշտ են անում մերոնք, տեսնե՞լ ես ամերիկացիների բիոլաբորատորիաները»,– ասում էր ծանոթներիցս մեկը՝ նախկին զինվորական: «Դե թող փակեն սահմանները, Հնդկաստանն արդեն խոստացել է, որ դեղեր մեզ կմատակարարի, Չինաստանը՝ տեխնոլոգիաներ», ասում էր մեկ ուրիշը՝ լրագրող-միջազգայնագետ: Նա նաև ինձ հավաստիացրեց, որ միջուկային պատերազմ չի լինի, քանի որ «դե հո չեն գժվել»: Այս փաստարկն ինձ մի քիչ հանգստացրեց: Բայց ոչ բոլոր ծանոթներս էին այդքան վստահ: Պատկառելի տարիքի մի կին, ստաժավոր այլախոհ, լրիվ այլ կողմից էր նայում այս ամենին՝ «Ես Կրեմլից մի քանի կիլոմետրի վրա եմ ապրում, բայց արդեն սկսում եմ մտածել, որ եթե ամերիկացիք խփելու են Կրեմլին, թող խփեն, ես մեծ կին եմ արդեն, մենակ թե պրծնենք սրանցից»: Եվս մի ծանոթ, նախկին սպորտսմեն, տարիքով, բայց լավ պահպանված (երևի սպորտն էր օգնել) պատմեց, որ վերջերս դադարել է շփվել իր երկվորյակ եղբոր հետ, «потому что он крымнашист»:

2 Դժոխք

***

Տեղի ունեցողի ամենաընդգրկուն, անգամ մետաֆիզիկական բացատրությունը տվեց իմ մանկության ընկերը: Նա արդեն մի քսան տարի է Մոսկվայում է ապրում, դե արանքներում էլ, ինչպես ցանկացած իրեն հարգող մոսկվացի «էլեկտրոնշչիկ», Գոայում և Բարսելոնում: Հանդիպեցինք «Да» սուպերմարկետի մոտ: «Ապե, հլա նայի, որ հակառակ կողմից ես նայում, ի՞նչ ա ստացվում»: «Ад?»[2], հարցրեցի ես: Ստանդարտ հայեցի «բարլուս-ինչկա-էլինույնտներնեք» ծիսական հարցերից հետո կտրուկ անցանք ամենակարևորին: «Ապե, էս ի՞նչ ա կատարվում»,– հարցրեցի ես, քանի դեռ կանգնած էինք խցանման մեջ (աշխարհի վերջը աշխարհի վերջ, բայց Մոսկվայի տրանսպորտային իրավիճակը քիչ է փոխվում): «Ապե, գիտե՞ս Շիվան ինչի մասին ա»,– հարցրեց ընկերս, և գերմանուհի տատիկից ժառանգած կապույտ աչքերը փայլեցին: Ես գիտեի: Հնդկական դիցաբանության սրբազան եռյակից ինձ միշտ ամենաշատը գրավում էր հենց ինքը՝ Մեծն Տեր Շիվան, տիեզերքի ավերման և փոխակերպման աստվածը: «Դե էդ ա, ապե», եզրափակեց ընկերս:

Չգիտես ինչու, ֆեյսբուքը սկսում էր աշխատել միայն Սթարբաքսներում: Երևի ամերիկյան շպիոններին այդպես էր հարմար, ենթադրեցի ես

***

Թռիչքիս օրը որոշեցի մի լավ ման գալ իմ սիրած Մոսկվայով, քանի դեռ Շիվան գործի չէր անցել: Իմ ծրագիրն էր՝ անցնել Մոսկվայի՝ ինձ համար պատմական վայրերով, «նա վայրի» հրաժեշտ տալ: Օրինակ, տեսնել Պուշկինսկի

կինոթատրոնը, որտեղ ժամանակին ռեժիսոր քույրս ինձ իր հետ տարել էր Մոսկվայի կինոփառատոնի բացման, իսկ ես լկտիաբար քնել էի ֆիլմի ժամանակ: Ցույց էին տալիս Ալեքսեյ Ուչիտելի «Զբոսանք» ֆիլմը, սկիզբը և վերջը լավն էին, մեջտեղի մասը չեմ հիշում, քանի որ քնած էի: Փողոցի մյուս կողմում էլ Մոսկվայի առաջին «Մաքդոնաղլսը», որի «Մակկաֆեում» շատ անգամ խմել եմ զզվելի սուրճ, որն ինձ օք էր թվում, որովհետև մի շատ սիրուն ու բարի աղջկա հետ էի խմում: Իսկ հետո, անցնել Հին Արբատով և ոտքով հասնել «Կիևսկայա» մետրոյի մոտի «Սթարբաքսին», որտեղ առաջին անգամ լուրջ վեճ ունեցա նախկին կնոջս հետ՝ չիզքեյքի պատճառով: Այն ժամանակ նա դեռ նախկին չէր, անգամ կինս չէր, բայց հիմա հասկանում եմ, որ այդ չարաբաստիկ չիզքեյքն էր, որ դրեց մեր բաժանման հիմքը: Բայց, դե, սիրելի ընթերցող, համաձայնվի՛ր, որ անընդունելի է պնդել, որ սոված չես ու ուտելու բան չես ուզում, իսկ հետո խժռել չիզքեյքի հալալ կեսը:
Սկսեցի Մոսկվայի հիփսթեր համայնքի սիրելի վայրից՝ «Ցվետնոյ Բուլվար» մետրոյի մոտի առևտրի կենտրոնից: Վերևի հարկի «Ռեսպուբլիկա» գրախանութում գրքերի վերնագրերը զրուցում էին հետս: «Иди туда, где страшно»[5],– ասում էր ինչ-որ հոգեբան: «Gimme some truth»,– ասում էր Ջոն Լենոնը մեկ այլ գրքի շապիկից: «Империя должна умереть»[6],– պատասխանում էր Միխայիլ Ջիգարի գրքի շապիկի վրայից Նիկոլայ Երկրորդը: Նրանք կարծես փորձում էին համոզել, որ իրենց տանեմ հետս Երևան: Բայց այդ գրքերը շանս չունեին: Նախորդ օրն արդեն առել էի «Присутствие Шивы» գիրքը, և գիտեի, որ հարցերիս պատասխաններն այնտեղ կգտնեմ, էլեկտրոնշչիկ ընկերս՝ վկա:
Փոխարենը որոշեցի հիփսթերական ֆուդ կորտից առնել վեգանական տիրամիսու և նույնքան վեգանական կրեմ բրյուլե:

3 Ձեր ֆարտը չի աշխատում, երևի որովհետև ռուսական չէ:

4 Հիմա այդպես պատրահում է, մի երկու ժամից կաշխատի:

5 Գնա այնտեղ, որտեղ վախենալու է:

6 Կայսրությունը պետք է մեռնի:

Չէ՞ որ աշխարհի վերջն էր մոտենում, և այլևս իմաստ չուներ սահմանափակվել միայն մեկ դեսերտով, առավել ևս վեգանական: Վեգանական դեսերտները ոչնչացնելուց հետո մոտեցա մի սեղանիկի, որտեղ վաճառում էին կանեփով սուրճ և կանեփով թեյ: Որպես արտադրական կանեփի մեծ սիրահար, չէի կարող անցնել այդ ամենի կողքով և պատվիրեցի կանեփով սառը թեյ: Պարզվեց որ երիտասարդ աշխատակցուհին գաղափար չուներ, թե ինչպես պետք է սարքել կանեփով թեյը, քանի որ այդ օրն իր աշխատանքի առաջին օրն էր, ես էլ՝ առաջին հաճախորդն էի: Սկզբից ուզում էի ասել «ոչինչ» ու գնալ, բայց աղջիկը տրամաբանական փաստարկ բերեց «должна же я научиться»: «Вы спешите?»,– ավելացրեց նա: Ասացի, որ առանձնապես չէ, բայց ցանկալի է մինչև երեկո թեյս պատրաստ լինի, որովհետև Երևան եմ թռնում: «Да, сейчас все в Ереван улетают»[7], անվրդով տոնով նկատեց կանեփառուսուհին:

Վերջապես, կանեփով սառը թեյս պատրաստ էր, և ես, իսկական մոսկվացի հիփսթերի պես էկոլոգիապես մաքուր թղթե ձողիկով այն խմելով, քայլեցի դեպի մետրո: Մետրոյի մոտ պարզվեց, որ ստորգետնյա անցումի մուտքը փակ էր: Այդ օրը ընդդիմադիրները պլանավորել էին հակապատերազմական ակցիաներ, և ոստիկանները փակել էին ճանապարհը: «А где тут можно пройти?» հարցրեցի «բոռնիկով» ռուսգվարդիականին: «Не могу знать», մռայլ պատասխանեց ոստիկանը, բայց քանի որ ջահել տղա էր, մի տեսակ մարդկային հնչեց: «Спасибо»[8], ասացի ես, և, հիշեցի, որ «спасибо» նշանակում է «спаси Бог»: Մտքումս ավելացրեցի. «էհ, ախպեր ջան, Աստված տա, քեզ Ուկրաինա չուղարկեն»:

Օրվա վերջում հասա «Բելառուսկի» կայարան: Քանի անգամ եմ այստեղից նստել գնացք, որ գնամ Շերեմետյեվո օդանավակայան: Առաջ կայարանի դիմացի հրապարակում միշտ ինչ-որ բան էին բզբզում, քանդում-սարքում: Հիմա վերակառուցումն ավարտել էին, հրապարակը շատ գեղեցիկ էր: Ինստագրամի համար մի երկու նկար արեցի, բայց լավ չստացվեց, լույսը քիչ էր: «За мною зажигали города, глупые, чужие города, там меня любили, только это не я»,– երգում էր ականջակալներիս մեջ Наше Радио-ն:

Մտա ներս՝ մտածելով որ ուշացել եմ գնացքից և պետք է սպասեմ հաջորդին: Պարզվեց, որ գնացքն էր ուշացել հինգ րոպեով, և հիմա նոր էր շարժվում, կարծես ինձ էր սպասում: Երևի Գանեշան էր բզբզացել՝ խոչընդոտներ վերացնող աստվածը, մտածեցի ես: Հիշեցի, որ Գանեշային պատկերում էին փղի գլխով, և դրանից հիշեցի երևանյան գազանանոցի դժբախտ փիղ Վովային, ում գնդակահարեցին, երբ նա խելագարվեց և փախավ վանդակից: Վովան փախստական էր Ուկրաինայից. երբ 1941-ին պատերազմը հասավ Ուկրաինա, կրկեսի փիղ Վովան և նրա վարժեցնող Իվանը քայլելով եկան հասան Երևան: «Հետաքրքիր բան ա ուղեղը,– մտածեցի ես,– որտեղից որտեղ հասա»:

***

Ինքնաթիռն այս անգամ էլ «բոինգ» էր, բայց լեփ-լեցուն: Միայն իմ կողքի տեղն էր ազատ մնացել: Երևի տիեզերքն այդպես է դասավորել, որ հարմար նստեմ, մտածեցի ես և շնորհակալություն հայտնեցի Շիվային: Ուղևորների մեծ մասը ռուսներ էին: Հիմնականում երիտասարդ, լավ հագնված: Շատերը ընտանիքներով էին, փոքրիկ երեխաներով, շունիկներով ու կատուներով, մեծ և բազմաթիվ ճամպրուկներով: Այս պատկերը շատ անսովոր էր: Ինձ զգում էի ոչ թե «բոինգի», այլ Նոյյան տապանի ուղևոր: Ընդ

որում, ի տարբերություն մյուսների, ինձ Նոյյան տապանի տոմս հասնում էր ի ծնե: Դե, ի վերջո, պետք է մի առավելություն ունենա՞ր Հայաստանում ծնվելը, թե՞ չէ:

Երևան գալուց հետո մի լավ քնեցի և մյուս օրը բարձրացա Հաղթանակի այգի, որ Մայր Հայաստանին զեկուցեմ, որ հետ եմ եկել և դարձյալ իր տրամադրության տակ եմ: «She's a femme fatale, better watch your step», — զգուշացրեցին Նիկոն և Վելվեթ Անդերգրաունդը, երբ «Արագիլ» սրճարանի ավերակների մոտից երևաց Մայր Հայաստանը: Զգուշացումն ավելորդ էր, ես հո գիտեի, որ Մայր Հայաստանի հետ կատակ անել չի կարելի, գահավիժված պղնձե Ստալինի ճակատագրից վաղուց էի տեղյակ: «Down on your bended knees»,– հրամայեց ծնկի գալ Լու Ռիդն իմ ականջակալներում, երբ մոտեցա արձանին: Եղանակը լավն էր, Արարատը երևում էր բոլոր մանրամասներով: Հասկացա, որ հույս կա, որ Աստվածուհին տրամադրված է այս անգամ էլ ներել մեզ մեր տարատեսակ եզրությունները, և աշխարհի վերջն այստեղ չի հասնի, կամ, առնվազն, եթե հասնի, ապա լայթ տարբերակով: «If there is one guy, who'd lay down his soul for you and die, I hate to say it, I hate to say it, but it's probably me»,– երգում էր Սթինգը հեռախոսիս միջ, իսկ ես նայում էի Մասիսին և շնորհակալություն հայտնում, որ սաղ-սալամաթ հետ եմ եկել: Նոյյան տապանի տեսությունը կարծես հաստատվում էր: Զգացի, որ մեկը ձեռքը դրեց ուսիս: Մոսկվացի հայ ծանոթներիցս մեկն էր: Պարզվեց, որ գործուղման էր եկել պատերազմի սկզբից մի քանի օր առաջ, հետո որոշել էր արձակուրդ վերցնել և ավելի երկար մնալ Հայաստանում: Հիմա զբաղված էր ծանոթ ռուսաստանցիներին օգնելով Հայաստանում տուն գտնել: «Հենց հիմա տանս մի երկու հոգի ապրում են,– ասաց,– մի երկուսի համար էլ արդեն տուն գտել եմ»: Հա, ես էլ եմ սպասում մի երկու հոգու,– ասացի ես,– բայց ասել են, որ շատ չեն մնա, մի երկու օր կհանգստանան ու կշարժվեն Գյումրի: Երկուսս էլ համաձայնվեցինք, որ Երևանում արդեն տեղ չկա, և ռուսներին պետք է ուղղորդել դեպի այլ քաղաքներ: «Այ, օրինակ, Գորիսը, շատ հաճելի քաղաք է»,– ասացի ես: «Վանաձորն էլ ոչինչ»,– ավելացրեց նա: Թվելով Հայաստանի քաղաքները՝ իջանք Կասկադ, որտեղ նրան սպասում էին տուն որոնող հերթական ռուսաստանցի ծանոթները: Մի քիչ խոսեցի, փորձեցի տրամադրությունները բարձրացնել, բայց «понаехали тут»[9] արտահայտության մոտիվներով իմ անհաջող կատակից հետո հասկացա, որ չափն անցել եմ և գնալու ժամանակն է: Հաջողություն մաղթեցի, ինքս նստեցի մի սրճարանում: Սրճարանի միակ աշխատողը՝ կարմրամազ և կապուտաչյա հայուհին, անսպասելիորեն անթերի ռուսերենով պատմում էր մոսկվացի ծրագրավորողների (գուցե դիզայներների կամ քոփիթայթերների) ամբոխին Կոլումբիայի Արմենիա քաղաքի և այնտեղից բերված սուրճի մասին: Ենթադրյալ ծրագրավորողները լսում էին զգուշավոր լավատեսությամբ: Ես պատվիրեցի բուսական թեյ, ուսապարկից հանեցի համակարգիչն ու սկսեցի ինչ-որ տեքստ հավաքել:

7 Հիմա բոլորը Երևան են թռնում:

8 - Ո՞ւրդեղով կարող եմ անցնել:
- Գաղափար չունեմ:
- Շնորհակալություն:

9 Լցվել են:

Շատերը ընտանիքներով էին, փոքրիկ երեխաներով, շունիկներով ու կատուներով, մեծ և բազմաթիվ ճամպրուկներով

Միխայել Զոլյան

«Ցանկացած տեղ կարող է դառնալ քո տունը»

Ինչո՞ւ որոշեցին անժամկետ մեկնել իրենց երկրից, ինչպե՞ս ընտրեցին Երևանը և ի՞նչ ծրագրեր ունեն այստեղ. պատմում են ռուս-ուկրաինական պատերազմի օրերին Երևան տեղափոխված ռուս ստեղծագործողները:

Մարիա

դիզայներ-կոնստրուկտոր

Երևան ենք հասել ինքնաթիռով, մինչ այդ արդեն մեր մի չվերթը չեղարկել էին: Ես Մոսկվայում ունեմ մի քանի մտերիմ հայ ընկեր, բացի այդ Երևանում է ապրում ընկերուհիս, ով Ռուսաստանից տեղափոխվել է վեց տարի առաջ և շատ մեծ ջերմությամբ ու սիրով է խոսում քաղաքի մասին: Բացի այդ, հասկացանք, որ կոնստրուկտորի մասնագիտությամբ ես կարող եմ այստեղ աշխատանք գտնել, մինչև գալս կապ հաստատեցինք մի քանի կազմակերպությունների հետ, ու շատ հնարավոր է, որ շուտով մի առաջարկ ստանամ:
Այստեղ կա անշտապության զգացողություն, որի շնորհիվ, ի տարբերություն Մոսկվայի, կարելի է հանգիստ վայելել քաղաքը, զբոսնել, նայել մարդկանց, նկատել, թե ինչպես են նրանք շփվում միմյանց հետ, ինչպես են վառվում քաղաքի լույսերը, ընկղմվել այդ միջավայրի մեջ: Ըստ իս՝ միջավայրը շատ ընկերասեր է, քաղաքացիները միշտ պատրաստ են օգնել, եթե ոչ ռուսերեն, ապա անգլերեն, կամ թեկուզ բացատրվում են ձեռքերով: Աղջիկս առանձնահատուկ սեր է վայելում այստեղ, ինչը շատ հաճելի է:
Ես շարունակում եմ հեռավար աշխատել որոշ բրենդների համար, խորհրդատվությամբ զբաղվել, բայց ամեն դեպքում ստացվում է հանգիստ տալ քեզ, վայելել և հանգստանալ:
Սպասում ենք, թե երբ է գալու մեր հայրիկը՝ ամուսինս, մեզ պակասում է միայն ինքն ու մեր կատուն, մնացած ամեն ինչը կա:
Երբ ժամանեցինք օդանավակայան, այնտեղ կար այսպիսի ցուցանակ՝ «Բարի գալուստ տուն», և ես մտածեցի՝ այո, ցանկացած տեղ կարող է դառնալ քո տունը, պետք չէ մարդկանց բաժանել ըստ տեղանքների, քանի որ եթե մենք վերջիվերջո կոտրենք այդ կարծրատիպերն ու սահմանները, դադարենք ամեն ինչ կիսել ու դառնանք աշխարհի մարդիկ, շատ լավ կլինի: Բոլորիս համար:

Պոլինա
լուսանկարիչ

Երբ սկսվեց պատերազմը, ընկերս, որ այդ պահին Կիևում էր, ասեց, որ պետք է արտագաղթեմ: Համաձայնվեցի, որ մի-երկու տարուց պետք է մի բան մտածել, բայց մի օր հետո արդեն տոմսը ձեռքիս էր:
Սկզբից տոմս էի գնել մարտի 19-ի համար, բայց չվերթը չեղարկվեց, իսկ քանի որ միանգամից խստացումներ մտցվեցին, ուզում էի հնարավորինս շուտ լքել երկիրը: Մինչդեռ քանի որ մոտակա օրերի տոմսերի գները շատ բարձր էին և քանի որ չէի կարող ինձ թույլ տալ տոմս գնել, Իտալիայում ապրող ընկերուհիս ինձ համար նոր տոմս գնեց: Ջարմուհիս գնացել էր Թբիլիսի, այնպես որ ես էլ էի մտածում այդտեղ մեկնելու մասին, քանի որ արդեն ծանոթ մարդ ունեի: Բայց դեպի այդ ուղղություն ուղիղ չվերթներ չկան, և քանի որ ես ճամփորդում էի շանս հետ, ինձ հարմար չէր կանգառներով չվերթը, մտածեցի՝ մի շաբաթ կմնամ Երևանում, հետո կշարունակեմ: Բայց երբ հայտնվեցի այստեղ, մտածեցի, ինչի՞ եմ առհասարակ որևէ այլ տեղ գնում:
Առաջին տպավորությունները քաղաքի մասին մի քիչ վախենալու էին, քանի որ ես եկա կենտրոնից շատ հեռու մի հյուրանոց [գտնվում է ՏԷՑ-ի մոտ — խմբ.], բայց երբ երկրորդ օրն արդեն կենտրոնում էի, հասկացա, որ Երևանը լրիվ ուրիշ է, մի տեսակ արտհաուսային: Շատ ծիծաղելի է, որ ես ընդամենը տասը ծանոթ ունեմ այստեղ, բայց զբոսնելիս միշտ ինչ-որ մեկին հանդիպում եմ, զարմանալի է: Ռուսաստանում դրան անգամ մոտ բան չկա:
Երկու խոսք էլ երևանցիների մասին. առաջին իսկ օրը քայլում էի, ձեռքերս զբաղված էին, երբ մի տղամարդ ասեց՝ «Ձեր կոշկաքուղը քանդվել է», ասեցի՝ «գիտեմ, բայց հիմա չեմ կարող կապել»: Ինքն առաջարկեց օգնել և կապել, որպեսզի չընկնեմ: Նման պահվածքը շատ հուզիչ է ու, ի տարբերություն իմ որոշ սպասումների, անկեղծ: Իմ տեսած Երևանը միատոն չէ, կա բազմազանության ու ազատության տպավորություն, շենքերի առումով ոնց որ արևելյան Խորհրդային Միություն լինի:
Հիմա փնտրում եմ հեռավար աշխատանք, շատ եմ ուզում մնալ առնվազն չորս ամիս, քանի որ շատ եմ սպասում հայկական ամառվան, բացի այդ էլ արդեն ունեմ ցանկ, թե որ վայրերն եմ ուզում այցելել: Մինչև դրանք հերթով չտեսնեմ, չեմ լքի երկիրը:

Ալեքսանդր
լուսանկարիչ

Սկզբից թվում էր, որ այս ամենը երկար չի տևի, կարծում էինք՝ մի քիչ կսպասենք, մինչև այս սարսափն անցնի. սխալվեցինք: Հիմա հասկանալի է՝ երկար է տևելու: Պատերազմի հաջորդ օրն առանց մտածելու տոմս գնեցի: Ուժ ու ցանկություն չկար Ռուսաստանում մնալու: Հայաստանն ընտրեցի, որովհետև այստեղ կան հաճելի ընկերներ, ազատության զգացողություն, որը Ռուսաստանում լրիվ մոռացվել է, կա էքսպատների համայնք, հատկապես՝ արվեստի մարդկանց: Բացի այդ, Հայաստանը նաև ֆինանսական առումով հասանելի տարբերակ էր:
Ես սիրում եմ քաղաքը. Երևանն ապրելու համար ադեկվատ չափեր ունի, հատկապես, երբ համեմատում ես մեգապոլիսների հետ՝ այստեղ ապրելն ավելի հաճելի է ու խաղաղ: Որպես լուսանկարիչ ինձ դուր է գալիս քաղաքի ֆակտուրան, նաև հասցրել եմ ծանոթանալ անդերգրաունդային նկարիչների համայնքի հետ, հոյակապ տպեր են: Ես արդեն հույս չունեի, որ կբռնացնեմ այս տեսակ ստեղծագործական ոգի իրական կյանքում, այլ ոչ գրքի էջերին: Հասցրել եմ ներգրավվել մի քանի պրոցեսների մեջ, կան հետաքրքիր գաղափարներ: Հենց հիմա հետաքրքիր սիմբիոզ է ծնվում տեղացի ու եկած նկարիչների միջև, շատ ոգեշնչող է:
Ուզում եմ հետքս թողնել մշակույթի մեջ, ինչ-որ բան ստեղծել տեղացի նկարիչների հետ, որովհետև միշտ հավատացել եմ, որ նկարիչներն աշխարհի կարևորագույն կոսմոպոլիտներն են: Իսկ ամենից շատ ուզում եմ հանգիստ ու հաճույքով ապրել, առանց վախի, որ մի առավոտ տանս դուռը կթակեն: Հենց Երևանում եմ ուզում անել շատ նշանակալից դաջվածք: Պլաններ չեմ կառուցում, բայց ունեմ հաճելի սպասումներ:

Ալինա
դիզայներ

Իրականում միտք չունեինք Երևան տեղափոխվելու, այնպես էր ստացվել, որ վերջերս էինք Պիտեր տեղափոխվել, ընդամենը մեկ ու կես ամիս էինք այդտեղ անցկացրել: Բայց մարտի սկզբներին ամուսնուս կազմակերպությունն առաջարկեց մեզ ռելոկացիա կա՛մ դեպի Սերբիա, կա՛մ Պորտուգալիա, կա՛մ էլ Երևան: Մոտ երկու շաբաթ պատրաստվում էինք Սերբիա տեղափոխվելու ընթացքին, սակայն հետո հասկացանք, որ բյուջեի տեսանկյունից չենք ձգի, ու բառացիորեն մեկնումից երեք օր առաջ հասկացանք, որ գալիս ենք Երևան:
Ես բացարձակ պատկերացում չունեի, թե ուր եմ գալիս, քանի որ չէինք հասցրել հետազոտել: Մեկնումից մի օր առաջ հանձնեցինք մեր Պիտերի բնակարանը, մոտ 300 կգ ընդհանուր քաշ ունեցող իրերն ուղարկեցինք ծնողների տուն, երկու ճամպրուկ հավաքեցինք, ինքնաթիռի տոմսեր գնեցինք ու մարտի 13-ին հայտնվեցինք այստեղ:
Քաղաքն ու քաղաքացիները շատ կոնտրաստային են մեզ համար, կան բաներ, որոնք երբեք չէինք տեսել, իսկ որոշ բաների գոյության մասին պարզապես մոռացել էինք: Օրինակ՝ հասցրեցինք մինչև նոր հակածխախոտային օրենքի ընդունումը երկու օր ծխել հաստատություններում, որտեղ ես հանդիպում էի ծխող կանանց, բայց հիմա չեմ տեսնում նրանց փողոցում ծխելիս, այնինչ տղամարդիկ ծխում են գրեթե ամեն տեղ, որտեղ կարելի է:
Տեղական մթնոլորտի մասին. երբեմն, երբ մարդիկ շփվում են, թվում է, թե վիճում են, բայց հետո պարզում ենք, որ պարզապես խոսում են: Սկզբից անսովոր էր, հիմա արդեն ընտելացանք: Շատ եմ սպասում ամառվան, որպեսզի հետազոտեմ փողոցային սրճարանների մշակույթը, ինչպես, օրինակ՝ Թայլանդում կա փայտիկների վրա միս խորովելու մշակույթը, հետաքրքիր է՝ այստե՞ղ ինչպես է: Չնայած արդեն մեզ համար հասցրել ենք առանձնացնել մի քանի սիրելի վայր: Նաև բավականին տպավորված ենք տեսարաններով, հատկապես՝ Արարատով, որը երևում է գրեթե բոլոր շենքերից, շատ յուրահատուկ ու գեղեցիկ բնական օբյեկտ է:
Մենք, որպես նորեկներ, շատ բան չգիտենք տեղական ավանդույթների մասին, շատ ենք ուզում, որպեսզի տեղացիները հանդուրժող գտնվեն մեր չիմացության ու անտեղյակության նկատմամբ, մենք էլ մեր հերթին դեռևս փորձում ենք շատ զգուշավոր լինել, բայց երբ ինչ-որ երևույթների բացատրությունը ստանում ենք, շատ բան ընկնում է իր տեղը:
Չմոռանանք, որ մեզ այստեղ է բերել ամուսնուս աշխատանքը, քանի որ SS ոլորտի համար բոլոր նախադրյալներն ու պայմանները կան, քաղաքը կարող է դառնալ յուրահատուկ Սիլիկոնային հովիտ, իսկ ինքս կուզեի գտնել ինձ համար աշխատանք՝ թեկուզ հեռավար:
Քանի որ մենք այստեղ կմնանք առնվազն կես տարի՝ պլանների մեջ կա բացահայտել քաղաքը, բնությունը, վայելել տաք օրերը մինչև շոգերի ընկնելը, միրգ ուտել, լողալ Սևանում, տեսնել՝ ինչպես են փոխվում բնապատկերների գույները: Բացի այդ, Երևանին շատ մոտ են միջերկրական երկրների օդանավակայանները, այնպես որ ուզում ենք համատեղել աշխատանքի ու կյանքի բալանսը՝ ճամփորդելով մոտակա երկրներ:

Պավել

երաժիշտ, վիդեոգրաֆ

Քանի որ ես հիմնականում աշխատում էի օտարերկրյա կազմակերպությունների համար, աշխատանքն անհետացավ: Հիմա ուրախության ժամանակը չէ, պատվերները չեղարկվում են, իրավիճակն ընկճող է, այդ իսկ պատճառով ուզում էի ճամփորդել, հանգստանալ, տեսնել՝ ինչ հնարավորություններ ու հեռանկարներ կան Հայաստանում: Ինչո՞ւ հենց Հայաստան. նախ այստեղ կարելի է ժամանել ներքին անձնագրով, իսկ ես օտարերկրյա անձնագիր չունեմ, բացի այդ Հայաստանում կան ծանոթներ, որոնք շատ էին գովում երկիրը: Առաջին տպավորությունս շատ դրական էր՝ նախ ուրախացրել էր օդանավակայանը, շատ լավ է սարքած, օրինակ՝ Ռուսաստանի հարավում ամեն ինչ շատ ավելի փոքր է, ես ակնկալում էի նման մի բան տեսնել: Ժամանումից անմիջապես հետո գնացինք Գյումրի, որտեղ ես, անկեղծ ասած, մի քիչ վշտացա. քաղաքը գտնվում է յուրահատուկ կարգավիճակում, անգամ տեղացիներն են խոստովանում, որ երկրաշարժից հետո վերակառուցվում է արդեն 30 տարի, բացի այդ եղանակը բավական ցուրտ էր, այնինչ մենք եկել էինք հարավ՝ ջերմություն ու արև էինք ուզում: Հետո, երբ արդեն եկանք Երևան, տեսանք, որ այստեղ ուրիշ է, քաղաքն ապրում է, սա իսկապես կենդանի քաղաք է: Մոսկվան, օրինակ, ավելի բարեկարգ է, ամեն ինչ ու ամեն ինչից շատ ավելի շատ կա, բայց այստեղ կա կյանք, մարդիկ շփվում են, օգնում իրար, շատ զարմանալի է:

Ես ինձ համար կոտրեցի հայերի մասին ունեցած կարծրատիպերս. մեզ մոտ ես հայերի հետ հիմնականում հանդիպել եմ շուկաներում և մեքենաների ավտոսերվիսներում, այդ հայերը սովորաբար հակված են «գցելուն»: Այնտեղ «եղբայրով» են դիմում, այստեղ՝ «ջանով», արդեն ուրիշ պատմություն է:

Ցավալի է, որ տների վարձն այդքան թանկացավ, Գյումրիի տան վարձն ավելի շատ էր, քան իմ Մոսկվայի գրեթե կենտրոնում գտնվող տան վարձը, վարձին էլ գումարում ենք կոմունալները, ջեռուցումը, որն ահավոր թանկ է: Բայց երբ սկսեցինք ծանոթանալ մարդկանց հետ, հայտնաբերեցինք, որ երկրում կան բազմաթիվ ունիկալ մարդիկ, շատ-շատերը խոսում են մի քանի լեզվով, օրինակ՝ ծանոթացանք անիմացիոն ստուդիայից Աղվանի ու իր կնոջ՝ Իռայի հետ, ով գրքեր է գրում ու հաջողությամբ վաճառում դրանք Amazon-ում: Հիմա Սևան ենք գնալու վավերագրող Վարդանի հետ՝ մարդիկ ապրում են ստեղծագործելով, լուսաբանում են պատերազմները, այս ամենն իրոք տպավորում է:

Որպես երաժիշտ ես այս պահին ինձ համար այստեղ հեռանկարներ չեմ տեսնում, ռեալիզացվելը շատ բարդ է: Կենդանի երաժշտությունը, որն այստեղ սովորաբար նվագում են, յուրահատուկ է, ռուս մարդու համար, այսպես ասենք՝ բարդ է, երաժշտական դպրոցներում կոպեկներ են տալիս: Այդ ամենը Ռուսաստանում էլ է քիչ վարձատրվում, իսկ այստեղ՝ էլ ավելի քիչ:

Մենք եկանք, ծանոթացանք, հիմա պետք է վերադառնանք, քանի որ մնացել են անավարտ գործեր, բայց պլանավորում ենք վերադառնալ ու սկսել առաջ շարժվել հենց այստեղից, քանի որ Հայաստանն այս պահին ելք է դեպի աշխարհ և զարմանահրաշ երկիր է:

Կատյա
կրետատիվ պրոդյուսեր

Ես միշտ ունեի այն զգացումը, որ Ռուսաստանում կայուն չէ, և մեծ հաշվով ես միշտ մի ոտքով Վրաստանում էի: Բայց անցած աշնանն այցելեցի Երևան, եկել էի վիպասանայի [բուդդիզմում մեդիտացիայի տեսակ — խմբ], նաև մի քիչ ճամփորդեցի երկրով, այցելեցի Վանաձոր ու Գյումրի, ինձ այստեղ շատ դուր եկավ: Ի տարբերություն Վրաստանի՝ այստեղ կարծես ավելի ջերմ է:
Իրականում, մինչև վերջին պահը ես ուզում էի մնալ իմ երկրում, պայքարում էի, գնում էի ցույցերի, լուսաբանում դրանք: Մի պահ մտածեցի, որ կարելի է գնալ ծնողների մոտ՝ Կամիշլով, բայց հետո սկսեցին ընկերներիս իրենց տեսախցիկների օգնությամբ իդենտիֆիկացնել ու այցելել նրանց տներ, իսկ վերջին կետը դարձավ այն, որ կենտրոնում՝ հենց ցույցերի տարածքում, ամեն քայլափոխի գլխից մի փոքր վերև դեմքերը ճանաչող տեսախցիկներ էին տեղադրվել: Նույն պահին էլ չեղարկեցին դիմակ կրելու կանոնակարգը, և ակնհայտ էր, թե ինչի համար է այդ ամենն արվում:
Գնալով ամեն ինչ սկսեց ավելի վատանալ, ու ես հասկանում էի, որ մի օր ալիքն ինձ էլ է հասնելու: Որոշել էի մեկնել կատվիս հետ, քանի որ հասկանալի չէր՝ կկարողանամ վերադառնալ իր հետևից, այնպես որ հիմա ապրում է մեզ հետ և թվում է՝ գոհ է կյանքից:
Երևանն ընտրելու և այստեղ տեղափոխվելու առումով ոչ մի կասկած չկար, ես անգամ հոգեթերապևտիս հետ քննարկեցի, որ սա հենց այն վայրն է, որտեղ ես ինձ հարմարավետ ու լավ եմ զգալու: Սա ինձ համար փախուստ չէ, այլ լավ փորձ. Ռուսաստանում բավական գորշ ճարտարապետություն է, գորշ եղանակ է, Մոսկվայում արև չկա, իսկ ես ստեղծագործող մարդ եմ, ինձ վրա այդ ամեն դեպքում ազդում է: Այստեղ անգամ տուֆն է ջերմ գույների, իմ կարծիքով այդ ամենը լավ ազդեցություն է ունենալու: Ես միշտ կատակում եմ, որ հայերը սուպերմարդիկ են. ես ոչ մի տեղ չեմ տեսել այսպիսի բարի ու բաց մարդկանց, բնականաբար, շատ մեծ ցանկություն կա շփվելու ու համագործակցելու տեղացիների հետ:
Ես շարունակում եմ հեռավար աշխատել Ռուսաստանի համար, բայց նաև ուզում եմ ընկերներիս հետ ստեղծել գործակալություն ու փորձել աշխատել տեղացիների հետ: Մենք ոչ թե եկել ենք մեր մշակույթով, մերն այստեղ իրականացնելու՝ դա անիմաստ է, դու եկել ես ուրիշ երկիր, այստեղ հետաքրքիր է ծանոթանալ տեղականին, այնպես որ պետք է մերձենալ հայկականին, ստեղծել երկու մշակույթների համատեղ միաձուլումը, սիմբիոզը:

Ալիսա
մոուշն դիզայներ

Վիկտոր
արտ լուսանկարիչ

Ալիսա. Մենք արդեն երկար տարիներ է, ինչ պլանավորում էինք մեր մեկնումը, ուղղակի առանձնապես պարզ չէր, թե երբ է դա լինելու ու որտեղ ենք գնալու, բայց արդեն հիմա, երբ հայտնվեց ակնհայտ կատալիզատոր, ամեն ինչ որոշվեց շատ կտրուկ, կարելի է ասել՝ իմպուլսիվ: Ի սկզբանե մտածում էինք մեկնել Վրաստան, քանի որ մեր ծանոթներից շատերը մեկնեցին այդտեղ, մենք էլ մեր հերթին ուզում էինք հայտնվել ընկերների միջավայրում, չկտրել նախկին կապերը: Սակայն երբ հայտնվեցինք Երևանում, նախ՝ մեզ այստեղ շատ դուր եկավ, իսկ հետո բազմաթիվ ծանոթներ սկսեցին ժամանել նաև այստեղ, այդ իսկ պատճառով չկար միայնության զգացողություն: Բացի այդ սկսեցինք նոր ծանոթություններ ձեռք բերել տեղացիների մեջ, դա էլ իր հերթին որոշակի թեթևության զգացում ավելացրեց: Կյանքը հեշտանում է նրանից, որ ուղղակի կարող ես գնալ ինչ-որ բար, խոսել մարդու հետ ու ընկերանալ:

Ի սկզբանե մտածում էինք մեկնել մի ամսով, քանի որ ամենասկզբում թվում էր, թե մի ամսից ամեն ինչ կարող է լավ լինել, հիմա արդեն ակնհայտ է, որ այդպես չէ: Ես գրանցվել եմ նոր արտասահմանյան անձնագիր ստանալու համար, պետք է սպասեմ մի քանի ամիս, հետևաբար՝ դեռ երկար կմնանք այստեղ, բայց ես դրանից չեմ վախենում, սա շատ հետաքրքիր փորձ է, ինձ այստեղ վախեցնում են միայն վարորդները:

Մարդիկ շատ բարեհամբույր են, ինչն ինձ համար շատ անսովոր է, կարծես սպասում ես որևէ խարդախության, ինքդ քեզ ասում ես, որ նորմալ է, բայց դեռ լիարժեք սովոր չես դրան: Օրինակ, երբ անծանոթը փողոցում մոտենում է ու հարցնում՝ Ձեզ պե՞տք է օգնել, ես երբեք նման բանի հետ չեմ առնչվել: Ես ինքս մեծ հաշվով շատ կասկածամիտ եմ, հիմա եմ քիչ թե շատ սկսել հասկանալ, որ ամեն ինչ նորմալ է, մարդիկ շատ բաց են, ինչը Մոսկվային ու Սանկտ Պետերբուրգին բացարձակապես հատուկ չէ:

Հիմա աշխատանք եմ փնտրում, դրան զուգահեռ մտածում ենք ինքներս ստեղծել մեր ստարտափը, գործակալություն, որը կզբաղվի նախագծերի առաջխաղացմամբ, ոչ թե SMM, այլ ինտերակտիվ խաղի պես բան, որը կներգրավի օգտատերերին: Կա տպավորություն, որ այստեղ շատ են հնարավորությունները, կարելի է նոր բաներ մտածել, զարգացնել, օգնել զարգացման ընթացքին: Շատ հաճելի է նման զգացողություն ունենալ, զգալ առաջընթացի մթնոլորտը, մտածել, որ կարծես թե ամեն ինչ բաց է քո առջև:

Վիկտոր. Քաղաքն ակնհայտորեն հարմարավետ է, այն իմաստով, որ ամեն տեղ կան մթերային խանութներ, հանրային տրանսպորտը բավարարող է, երթուղայիններն այդքան էլ չէ, բայց ավտոբուսները լավն են: Քաղաքը թեև ինչ-որ առումով աղքատիկ է, բայց մաքուր է ու կոկիկ, նույնը, օրինակ, կարող եմ ասել մեքենաների մասին՝ շատերը հին են, բայց մաքուր: Քաղաքը կառուցվում է, կան երկարամյա նախագծեր, որոնց շուրջն ամեն դեպքում մաքուր է, մեզ մոտ՝ Սոչիում, օրինակ, այդպես չէ:

Դիանա Մարտիրոսյան
Հայգայլ Կրսադենյան

Անշարժ գույքից պասրերապմ և հակառակը

Ո՞վ է որոշում՝ ի՞նչ արժե անշարժ գույքը Երևանում և մարզերում, ումի՞ց պահանզենք արդար գնագոյացում, ի՞նչ լծակներ են ապրում այս շուկայի վրա, ի՞նչ մեխանիզմով կապենք ամենաթողությունն ու որտեղի՞ց սկսենք ոլորտը համակարգել: Մի խոսքով՝ ո՞վ է մեղավոր ու ի՞նչ անենք: Փորձել ենք պարզել «ՍԱՄ Էլիտ» անշարժ գույքի գործակալության հիմնադիր Արա Դավթյանից:

Արա Դավթյան, «ՍԱՄ Էլիտ» անշարժ գույքի գործակալության հիմնադիր

Մասը կարվա փոփոխություն

Անշարժ գույքի գները սրընթաց աճում են ու աճում՝ անսալով հնարավոր բոլոր արգելքներն ու պատժամիջոցները: Գույքի գների վրա ոչ մի ազդեցություն չունեցավ 2008-ի համաշխարհային դեֆոլթը. համատարած գնանկման ֆոնին Հայաստանում գույքը շարունակում էր արժևորվել: Իսկ տարատեսակ հեղափոխությունները միայն նպաստեցին, որ գերագնահատվի հողի քառակուսի մետրը հայոց աշխարհում: Որքան էլ անմարդկային թվա, բայց գույքի գները բարձրանում են նաև պատերազմների արդյունքում: Ռուս-ուկրաինական հակամարտությունը ստիպեց անդրադառնալ հայաստանյան անշարժ գույքի խնդիրներին:

«Ինչո՞ւ անշարժ գույքի ոլորտը ոչ մի կերպ չի վերահսկվում, չի հարկվում և գները չեն կանոնակարգվում, ո՞վ է մեղավոր ու ի՞նչ անել» հարցերի տարափն անակնկալի չբերեց դեռևս 2009-ին «ՍԱՄԷլիթ» անշարժ գույքի գործակալություն հիմնադրած Արա Դավթյանին: Նա այսօրինակ բողոք-պահանջներ լսում է վաղուց ու ամեն մի նոր թանկացումից հետո արդեն հոգնել է արդարանալ տանտերերի փոխարեն: Հանգիստ ու հավասարակշիռ պատմությունը սկսում է սկզբից. «2010-ին այլ էր վերաբերմունքն անշարժ գույքի գործակալության, գործակալների նկատմամբ, մեզ ընկալում էին որպես ոչնչի համար մեծ գումարներ աշխատող մարդկանց: Չէինք կարողանում բացատրել, որ մենք ենք ձեր տունը և՛ գնահատողը, և՛ վաճառողն ու հետո նաև ձեզ համար նոր տուն գնողը: Փառք Աստծո, տասը տարվա մեջ մարդկանց վերաբերմունքը փոխվեց, էլի գոհ եմ»,– ժպտում է ու ուղղում սեղանի շարքով դրված իրերը՝ այցեքարտերի տուփը, փայտի վրա փորագրված լոգոն, գրչամանը, բլոկնոտները:

Էլեկտրոնային սիգարետը ոչ մի կերպ չի տեղավորվում այդ շարքում, աչք է ծակում, վերցնում, թաքցնում է դարակում ու շարունակում՝ պատմելով իր ուզածը և դեռևս անտեսելով իմ հարցատարափը. «Հիշում եմ մեր առաջին գրասենյակը՝ Վարդանանցի վրա էր, փոքր, նեղ, ես ու եղբայրս էինք: Մենք ոչ թե զրոյից ենք սկսել, այլ մինուսից, քանի որ միշտ հարկային դաշտում ենք եղել: Բայց մեծ ամբիցիաներ ունեինք, որոշել էինք գրավել Երևանն ու սկսեցինք հենց Փոքր Կենտրոնից: Տուն, տեղ, ընտանիք մոռացել էինք, քաղաքով քայլելիս շենքերն էինք ուսումնասիրում, մտքի մեջ գնահատում, հետո մի քիչ սակարկում, իջեցնում, որ արագ վաճառվի... Եթե ինքդ քեզ կարողացար համոզել, տանտիրոջը կհամոզես: Մեր աշխատանքում հոգեբանության հիմունքներին ծանոթ լինելը շատ է օգնում»:

Ոչ վերջին պասրերապմը

Տրամաբանական հարց ծագեց՝ մասնագիտությամբ ի՞նչ եք: Պարզվում է՝ զինվորական է, ավարտել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիան, բայց պատերազմ չի սիրում: Հիշեցինք պատերազմը: Մեր: Արցախյան: Ակամայից ասացի՝ «Վերջին պատերազմի ժամանակ...» ու արագ ուղղեցի ինձ՝ «Արցախյան քառասունչորս օրվա պատերազմի ժամանակ ինչ փոփոխություն ապրեց անշարժ գույքի շուկան»: Նկատեց: «Դա վերջին չի, որովհետև վերջինը պետք է մեր հաղթանակով ամրագրվի: Իսկ անշարժ գույքի շուկան... չգիտեմ, այդ օրերին ես գներին չեմ հետևել»: Անսպասելի էր, հարցական հայացքս դրդեց շարունակել: «Ես զինվորական կրթություն ունեմ, սահմանից երեք հոգու հետ խոսելը հերիք էր հասկանալու, որ լայնամասշտաբ, մի քանի ուղղություններով ու երկարաժամկետ բախում է լինելու: Մտածեցինք՝ ինչով օգնենք մեր տղերքին ու որոշեցինք թիկունքից մատակարարել առաջին անհրաժեշտության պարագաներ: Սարյան փողոցում՝ մեր գրասենյակի հենց կողքը, շտաբ հիմնեցինք: Սզբում տաք ներքնազգեստ, զինվորական շորեր, սիգարետ, չոր ուտելիք էինք հավաքում, լցնում ֆորդերն ու օրական երկու-երեք անգամ ուղարկում Արցախ: Հետո անցանք դեղորայքին, հետո էլ արդեն պաշտպանական համակարգեր՝ հեռադիտակներ, բրոնիկներ, դվիժոկներ... եսիմ, է՛...»:

Մասնագիտության մասին անմեղ հարցից անցանք ծանր թեմաների ու մոռացանք անշարժ գույքն էլ, շուկայի կառավարման անհրաժեշտությունն էլ: Շտաբի անունն «Ամուր թիկունք» էր, գրասենյակի աշխատակիցները՝ տների բազաները մոռացած, օր ու գիշեր հերթապահում էին այստեղ, գրանցում ստացած ապրանքը, դասակարգում ու դասավորում: Նրանց օգնում էին Բրյուսովի ուսանողները, օրական երեսունից ավելի կամավոր էր գալիս, դե, օգնությունների հոսքն էլ՝ անդադար: Շրջակայքի բոլոր ազատ տարածքները, դատարկ ավտոտնակները վերածվել էին պահեստների: Պատմում է ու էլի ուղղում առանց այդ էլ մի գծով շարված

սեղանի իրերը. «Մի օր ձեր կոլեգա ժուռնալիստներից մեկը եկավ հարցազրույցի, հարցրեց՝ ո՞նց եք վերահսկում այս ամբողջ շրջանառությունը, որպեսզի գողություն չլինի: Ապշել էի հարցից, զարմացած ասացի՝ ի՞նչը վերահսկեմ, էս օրով ո՞նց կարա մարդ իրեն թույլ տա գողանալ զինվորին հասանելիքը...»:
Խնայեցի, չասացի, որ մի քանի օր առաջ պաշտոնապես հայտարարվեց, որ 800-ից ավելի մեղադրյալ կա 44-օրյա պատերազմի վերաբերյալ հարուցված քրեական գործերով: Փորձեցի բերել անշարժ գույքի դաշտ. «Իսկ տեղահանվածներին օգնո՞ւմ էիք, կացարաններով ապահովում»: Պատմեց, որ օրական մոտ հինգ հարյուր հոգի դիմում էր: Երբ զգացին, որ տները չեն հերիքում, Սևանում չգործող գործարան վերցրեցին, ապահովեցին մինիմալ պայմաններ՝ պատուհաններ, լոգարան, սանհանգույց ու տեղավորեցին ընտանիքներին: «Զանգում էի ընկերներիս, առանց բարև, բարի լույսի ասում՝ տասնհինգ մեշոկ բրինձ, մի էդքան էլ ոսպ, գրեչկա, ու լավ կլինի նաև շաքարավազ: Բոլորն օգնում էին, ինձ ոչ ոք չի մերժել: Ի վերջո բոլորիս պարտքն է»:
Դարակից հանեց էլեկտրոնային սիգարետը, նայեց, հետո որոշեց ինձ խնայել ու չծխեց: Խոսակցությունը մտավ փակուղի, անդառնալիորեն հեռացանք անշարժ գույքից: Որոշեցի մի պատերազմից անցում կատարել մյուսին. «Իսկ նախորդ՝ քառօրյա պատերազմի ժամանակ ինչ վիճակում էր անշարժ գույքը»: «Այո, այս շուկայի վրա թերևս միայն պատերազմները կարող են ազդեցություն ունենալ: Գոնե ժամանակավոր: Ապրիլյանի ժամանակ տուժեցին մենակ սահմանային շրջաններում գույքի տերերը, գյուղերը դատարկվեցին ու էլի բոլորը եկան Երևան՝ վարձով ապրելու: Մայրաքաղաքում գույքի գինն էլի բարձրացավ: Բայց ամենաբարձր ցուցանիշը հեղափոխությունից հետո էր, բոլորը հավատացին, որ լավ է լինելու: Հատկապես՝ սփյուռքում: Եկան ու սկսեցին բնակարաններ առնել: Հետո շատերը նորից հետ գնացին իրենց գլենդելները, բայց գույքի գներն անդառնալիորեն բարձրացան»:

Հարկել բոլորին անխտիր

Բանը հասավ նրան, որ Արան որոշեց հիմնել անշարժ գույքի գործակալների ասոցիացիա, որպեսզի որևէ կերպ կանոնակարգվի ոլորտը, ընդհանուր գներ պայմանավորվեն, բայց շատ չանցած հասկացավ, որ լծակներ չկան իրական փոփոխություններ անելու: Ոլորտի վերահսկողությունը այդպես էլ մնաց պետության ուսերին, որն այս հարցին կանդրադառնա, երբ դանակը հասնի ոսկորին: «Ուղղակի պետք է բոլորին, անխտիր բոլորին բերել հարկային դաշտ՝ թե վարձակալությամբ տունը հանձնողը, թե վաճառողը պետք է չշրջանցեն հարկային դաշտը, մուծեն եկամտահարկեր, ոչ թե ընկերական պայմանավորվեն, կամ էլ գործարքը որպես նվիրատվություն ձևակերպեն: Վերջերս ընդունած գույքահարկի օրենքի նման հստակ վերահսկեն, և ով թանկ գույք ունի՝ առավել բարձր հարկ վճարի: Անտրամաբանական ոչինչ չկա, ուղղակի կամք է պետք, քաղաքական կամք օրենք մշակելու և գործարկելու: Գործակալություններն էլ ամեն գործարքից պետք է հարկ վճարեն, թե չէ այնքան օֆիսներ կան՝ երկու հոգի ամառանոցից առանց պայմանագրերի աշխատում են: Կամ մի հոգի է՝ իր բարսետկայով ֆոֆռում է քաղաքում»:

Բախտի գործոնը

Փաստորեն, տասը տարվա զարգացումն այնքան էլ շոշափելի չէր: Եթե փոխվել է միջնորդի դերի մասին պատկերացումը, նույնն է մնացել սեփական գույքի նկատմամբ գերագնահատված վերաբերմունքը: Ու գործակալությունը ոչ մի կերպ չի կարող ստիպել տանտիրոջը պահպանել խելամիտ գներ: «Մեր գրասենյակի տարածքը նույնպես վարձակալում ենք, մեր սեփականը չէ: Ամեն օր շփվում ենք աստղաբաշխական թվերի հետ, բայց պետք չէ մոռանալ, որ մենք ընդամենը միջնորդ ենք, օգնում ենք գտնել իրար: Սկզբում Աբովյան փողոցում էինք, հետո տարածքի տիրոջ հետ լեզու չգտանք, պատեհ-անպատեհ գալիս էր, խառնվում մեր գործերին, միլիոն դոլարանոց տների գործարքներ կնքելիս կարող էր իրեն թույլ տալ գալ ու ասել՝ սանհանգույցի եսիմինչը ջարդվել է: Այնպես որ մենք էլ ենք տանտիրոջ քմահաճույքի զոհ դարձել, նրա վերաբերմունքի պատճառով տեղափոխվեցինք: Սարյանում բախտներս բերել է, քովիդ, պատերազմ՝ միշտ ըմբոնող է եղել, մենք էլ առանց ուշացման վճարել ենք վարձը: Լավին էլ ենք տեր, վատին էլ, բայց դե բախտի բան է այս ոլորտը»:
Բախտն իր հերթին, բայց արտաքին ազդակներ, այնուամենայնիվ, գոյություն ունեն. «Ինչ փոփոխություն կկրի երևանյան անշարժ գույքի շուկան եկամտահարկի օրենքը չեղարկելուց հետո՝ մի հինգ տարի անց»: «Ես չեմ հավատում, որ գները կիջնեն: Չեմ հավատում ու վերջ: Դա շատ լավ ներդրումային ծրագիր է, որը մեծապես զարգացնում է տնտեսությունը, հատկապես՝ շինարարությունը: Գները կմնան նույնը, եթե ավելի չբարձրանան առնվազն երկրորդական շուկայում, իսկ այ տնտեսությունն իր վրա կզգա բացասական ազդեցությունը: Մարզերում գույք գնելը խթանելուց առաջ պետք է այդ նույն մարզերում ենթակառուցվածքները զարգացնել, կյանքն ակտիվացնել: Իսկ առայժմ միակ հաջողված օրինակը Դիլիջանն է, այն էլ ոչ պետական կառավարման շնորհիվ, այլ մասնավոր անհատի ամբիցիաների»:

Ռուսական գործոնը

Անհատից հասանք անհատի պաշտամունքը մերժած ու Հայաստան եկած մեծաթիվ ռուսներին: Ուկրաինայի դեմ սանձազերծած պատերազմի արդյունքում Ռուսաստանից տեղափոխվածների հոսքը հերթական անգամ ճոճում է անշարժ գույքի նավը: Ուզում եմ հասկանալ՝ նրանք բնակարաններ վարձակալող ժամանակավոր տուրիստնե՞ր են, թե ՀՀ-ում գույք ձեռք բերող ապագա քաղաքացիներ: «Վաղ է դատողություններ անել, առայժմ վարձակալության գների հիստերիկ աճի դեմ ենք փորձում պայքարել: Թարմ օրինակ. զանգել է մեր վաղեմի հաճախորդներից մեկն ու խնդրել իր նոր ազատված 300-հազարանոց բնակարանը հանձնել 800 հազարով: Վրդովվեցի, սկսեցի համոզել, որ գոնե մինչև 450-500 հազարի սահմաններում մնա: Մերժեց: Հաջորդ օրը զանգեց ու տեղեկացրեց, որ արդեն իր ուզած գնով հանձնել է: Հիմա ես ի՞նչ կարող եմ անել: Մեկը չի, երկուսը չի, համատարած է»: Փորձում եմ հակափաստարկ բերել. «Բայց չէ՞ որ դա ժամանակավոր բնույթ է կրում»:
Տառապանքը փորձ ունի, դառնորեն ժպտում է. «Հայը վաղուց ոչ մի հեռանկարային գաղափար, առավել ևս նպատակ չունի, ամեն ինչը ժամանակավոր է, տվյալ պահի շահով առաջնորդվող մարդիկ այնքան շատ են, որ արդեն չեմ էլ պայքարում նրանց դեմ: Հողմաղացի դեմ կռիվ տալու պես է, ապարդյուն, անիմաստ»:
Լծակներ չկան, իրոք: Էլի մտանք փակուղի: Երկրորդ անգամ բացեց դարակն ու թախանձագին նայեց էլեկտրոնային սիգարետին: Ու ես որոշեցի ավարտել զրույցն ու այլևս չփորփրել նրա հիշողությունների դարակն ու մեկ առ մեկ վեր հանել ցավերը:

↓ Երևանում հավաքված օգնություն հասավ Արցախ

Էլեն Բաբայան
Արա Դավթյանի արխիվ

Իրպենից Երևան.
Սեփական տան որոնումներով

Հայ-ուկրաինական ընտանիքում ծնված Եվգենիա Մելիքոնյանը պատերազմի պատճառով թողել է իր տունն Իրպենում, տեղափոխվել Լեհաստան, իսկ հետո՝ Երևան: ԵՐԵՎԱՆի խնդրանքով Եվգենիան պատմել է իր անցած դրամատիկ ճանապարհի ու Սեփական տան որոնումների մասին:

Երբ աշխարհը բաց էր, միակ տեղը, ուր ուզում էի վերադառնալ, Հայաստանն էր: Հիշում եմ, երբ ավարտում էի կամավորական ճամփորդությունս 2021-ին, կանգնած էի Լոռի-Փամբակում՝ լեռան գագաթին ու մտածում էի՝ «Այստեղ ամեն ինչ կա»: Այն ժամանակ ես գտա այն տունը, որը բոլորս փնտրում ենք, երբ մեծանում ենք: Այստեղ էի ձգտում:

Նախապատրաստություն

Ես երազում էի ճամփորդել աշխարհով՝ ունենալով մի հատիկ ճամպրուկ, որի կեսը լցված կլինի երաժշտական գործիքներով: Չունենալ ոչ մի պլան, ոչնչի մասին չմտածել, պարզապես վստահել աշխարհին: Բայց մարտին, երբ սկսվեցին իմ ճամփորդությունները, դա արդեն ոչ թե երազանք էր, այլ փորձություն:

Փետրվարին ես ինչ-որ հրաշքով թողեցի տունս Իրպենում ու գնացի հորս մոտ՝ Բոյարկա: Բոյարկան թեև գտնվում էր ռազմական գործողությունների եռանկյան ուղիղ կենտրոնում, ոչ օկուպացվել էր, ոչ գրոհվել: Բայց մենք լսում էինք պայթյուններն ու տեսնում հրացոլքը: Տնից համարյա դուրս չէի գալիս, միայն կամավորական աշխատանքների համար: Երբ ապրում ես մարտական պատրաստակամության վիճակում, գիտակցությունդ փոխվում է, փոխվում են սովորությունները: Շատ կարևոր է բոլորի հետ կապի մեջ լինել: Առավոտյան առաջին հարցը դառնում է՝ «հը՞, գիշերը հանգի՞ստ էր»: Հիմա արդեն դժվարությամբ եմ հիշում այդ օրերը, քանի որ ուղեղս պարզապես հրաժարվում է այս ամենը պահել, ավելի հեշտ է պարզապես ջնջել: Բայց շատ լավ հիշում եմ հեռանալուս օրը:

9 մարտի, չորեքշաբթի: Առաջին հանդարտ երեկոն, առաջին կանաչ միջանցքը՝ օկուպացված բնակավայրերից: Դեռ առավոտվա ութին վստահ չէի, որ գնալու համար ճիշտ օր է, իսկ արդեն կեսօրին կայարանում էի: Ահավոր լաց էի լինում, որովհետև նախորդող շաբաթներին՝ չնայած պատերազմի արհավիրքին, ընտանիքի ու մտերմության զգացողություն էի ձեռք բերել, անվերջ շնորհակալ էի կյանքին, բայց... Չէի ուզում գնալ, բայց մնալն անվտանգ չէր, և ես զգում էի, որ պետք է շարժվել: Դուրս եկա հորս տնից: Երբեք չէի եղել «իսկական հայ աղջիկ», այս օրերին դարձա: Աչքերս թաց էին: Ձեռքիս մի հատիկ ճամպրուկ էր, որի կեսը՝ երաժշտական գործիքներ: Գիտեի, որ գնում եմ նոր տուն գտնելու ու որ կանգ չեմ առնի, մինչև չգտնեմ:

Ապրված ու մարդկություն

Մինչ այդ պահը պատերազմի մասին լսել էի, զգացել էի, կարդացել էի այդ մասին: Իսկ էվակուացիոն էլեկտրիչկայում անցկացրած 14 ժամում տեսա արդեն մոտիկից: Անհավանական բարության ու փոխօգնության կողքին տեսա երեխաների հետ փախչող կանանց հոգնությունը, վախն ու մոլորվածությունը: Նրանք երբեք չէին երազում հենց այդպես մի հատիկ ճամպրուկով աշխարհ բացահայտել: Չէին երազում «փախստականի» պիտակի մասին: Ես նստած էի գնացքում ու լացելով հիշում էի հայ նախնիներիս պատմությունները ցեղասպանությունից փախչելու մասին: Գիտեի տասնյակ պատմություններ, երբ իմ նման անծանոթ մարդկանց օգնում էին «օտարները»: Այդ օգնությունը լավություն անելու կամ փրկելու ու փրկվելու համար չէր: Այլ խոր գիտակցությունից, որ բարությամբ պետք է կիսվել՝ չդարձնելով ոչ մեկին զոհ կամ փրկիչ: Դա իսկական Մարդկություն էր:

Այդպես ես էլ հանդիպեցի Լարիսային ու Յուրչիկին, որոնք ապաստան տվեցին ինձ Լվովում: Իսկ կոմպոզիտոր ու կամավոր Վիլյամը, որ հասցրեց ինձ Կրակով, երաժշտության ու կյանքի մասին զրույցներով հանգստություն էր սփռում: Իմ գործընկերուհի Կոնչետան, Ֆեյսբուքի ուժն ու Լեհաստանի պարողների համայնքը (Ալիսիան, Ալեքսանդրը, Աննան) ապաստան գտան ինձ համար: Սիրով լցված մի տուն էր, որտեղ ապրում էին Քրիսը, Կասյան, նրանց երեք երեխաները՝ Հելենան, Վիկտորն ու Աշան, նրանց տատիկն ու շնիկ Դիդեկը: Այստեղ ես նորից հարազատ տան ջերմությունը զգացի: Զարմանալիորեն հենց այս անվտանգ ու հարմարավետ միջավայրում օրգանիզմս վերջապես տեղի տվեց: Շատ ուժեղ խուճապի գրոհ ունեցա: Չգիտեի ինչ անել, ինչպես օգնել ինքս ինձ: Դեղերը չէին օգնում, նոր ընտանիքիս չէի ուզում անհանգստացնել, բայց մարմինս չէր դիմանում: Մի պահ թվաց, թե ուշագնաց եմ լինում: Սկսեցի աղոթել, խնդրեցի Աստծուն ցույց տալ ինձ, թե հանուն ինչի պետք է ապրեմ, թե ինչը կարող է օգնել ինձ: Առավոտյան հազիվ դողս զսպելով դուրս եկա երեխաների հետ զբոսայգում զբոսնելու: Փոքրիկ Վիկտորը մոտեցավ ինձ, գրկեց ու ասաց՝ «I love you»: Այդ պահին հասկացա, որ այդ մաքուր սերը հարցիս պատասխանն է:

Նույն օրը լավացա ու որոշեցի շարունակել ճանապարհս: Դեպի Հայաստան, որտեղ ես զգացել եմ Սերն ու Աստծուն հողի մեջ: Գտնելով երկրորդ տունս Կրակովում, ես նորից անցա Սեփական տանս որոնումներին: Հիմա ամեն անգամ քնելուց առաջ ես շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն մարդկանց, որոնց միջոցով ես տեսա Աստծուն ու զգացի, թե ինչպես է նա օգնում ամենքիս կյանքի ամենաբարդ պահերին:

Հայաստանն ու նոր իրականությունը

Տուն հասկացությունը հետազոտելիս ես եկա եզրակացության, որ ինձ համար դա ուժի տեղ է, կապ, մարդիկ, որոնց սիրում եմ, արմատներ ու երաժշտություն, որն այս ամենի արտացոլումն է: Փոխելով գարունը ձմռանով՝ ես նորից եկա Հայաստան: Այնքան երջանիկ էի, որ հասա, որ կայացրի այդ որոշումը, որ ինձ դիմավորեց սիրելի ընկերուհիս...

Բայց պարզվեց, որ անցած մի քանի ամիսների ընթացում իմ Հայաստանը փոխվել է: Նույնիսկ գործ գտնելով՝ չկարողացա տուն վարձել, քանի որ գները երեք անգամ աճել են: Խանութներում ամեն ինչ կրկնակի թանկացել է, պետությունից օգնություն չկա... Կյանքի կախարդանքից հետո խրվեցի կենցաղային առօրյայի ու իներցիայի մեջ: Իսկ կործանիչների ձայնը լսելիս նորից ու նորից լաց էի լինում: Նորից մարդիկ... Այստեղ ես տեսա, որ պատնեշի հակառակ կողմում հայտնված մարդկանց կյանքը նույնպես այլևս նույնը չէ: Առաջին օրերին տարակուսում ու զայրանում էի, որ իմ երկրորդ հարազատ հողը, որտեղ ես Տուն էի ուզում ստեղծել, օկուպացրել են «նույները»: Նրանցից ոմանք մեղքի զգացումից փախցնում էին հայացքը, երբ լսում էին, որ Ուկրաինայից եմ: Աստիճանաբար հասկացա, որ մենք բոլորս մի տեղում ենք՝ մի ահավոր մսաղացում: Ոմանք փախչում են, որպեսզի «օտարները» իրենց չսպանեն, իսկ մյուսները՝ որ չսպանեն «յուրայինները»: Եվ ահա այստեղ, այս գրեթե չեզոք Հայաստանում, մենք ստացանք հնարավորություն ապացուցելու տիեզերքին, որ կարող ենք ապրել կողք կողքի:

Հայաստանում ինձ ապաստան տվեց հրաշալի Աիդան, որի մոտ ապրում էի կամավոր եղած ժամանակ: Երբ շնորհակալություն եմ հայտնում նրան, միշտ ասում է՝ «Աստծուն շնորհակալ եղիր»: Իսկ ես ասում եմ՝ «Աստված բացի մարդկանցից այլ ձեռքեր չունի»:

Էլ ինչ եմ անում այստեղ: Հիմնական աշխատանքս միջոցառումների կազմակերպումն է: Բացի դրանից այս մեկուկես ամսվա ընթացքում ծանոթացա բազմաթիվ լավ մարդկանց հետ, հարցազրույց տվեցի, պատմեցի ուկրաինական ֆոլկլորի մասին ու օրորոցայիններ երգեցի ուկրաինացի երեխաների օգնության համար կազմակերպված բարեգործական երեկոյի ընթացքում: Երկու աշխատարան անցկացրեցի՝ ձայնի հետ աշխատանքի մասին, որոնցից մեկը նվիրված էր ուկրաինական ժողովրդական երգեցողությանը. ռուս ու հայ կանայք երգում էին ինչպես ուկրաինացի տատիկները: Այդ օրը պատերազմի սկսվելուց հետո առաջին անգամ էի երգում ուրիշ մարդկանց հետ, և դա ինձ տվեց մեծ ուժ, երախտիքի զգացում ու ուրախություն: Հետո միասին համերգ-մեդիտացիա արեցինք, որին հիմնականում ռուսներ էին եկել, որոնք ծանոթ էին այդ մշակույթի հետ: Անպայման կուզեմ նորից նման հանդիպում ունենալ, ու շատ կուզեմ, որ Ղրիմից Երևան տեղափոխված սքանչելի Յուլիայի «Մամա ջան» սրճարանում ուկրաինական ժողովրդական երգի փոքր երեկո կազմակերպել...

Հիմա Հայաստանը լավ հնարավորություն ունի մեծ քայլ առաջ անելու: Հրաշալի կլիներ, եթե ստացվեր: Բայց դա կախված է ամենքի ընտրությունից: Ես հավատում եմ, որ միայն մեր անձնական ընտրությունով, տրամադրվածությամբ ու արժեքներով մենք կարող ենք ապագա կառուցել:

Գրա՞ արդյոք կունա

Միայն կասեմ, որ ճանապարհս դեռ շարունակվում է: Հիմա մի ամսով գնալու եմ Վրաստան՝ պարի ու պերֆորմանսի դասախոսների խմբի հետ սարերում ռեթրիթ անցկացնելու: Վերջին մեկուկես ամսվա իմ բուռն փորձից հետո կարող եմ վստահ ասել, որ կարևորը քո գործն անելն է, սիրելի մարդկանց հետ լինելը, կյանքի համար շնորհակալ լինելը, սրտի հետևից գնալը: Պետք է զգալ ուրախությունն ու կյանքը: Ես կշարունակեմ գործս ու կշարունակեմ փնտրել մարդկանց ու այն հողը, որոնց հետ կուզեմ մնալ ավելի, քան վերադառնալ Ուկրաինա:

Ես շնորհակալ եմ այս պատերազմին, որ իմ մեջ բացվեց խորքային էությունը, որ բացահայտեց, թե ինչ եմ ես իրականում ցանկանում, օգնեց ապաքինել հին վերքերս: Թեկուզ ավելի մեծ ցավի օգնությամբ: Շնորհակալ եմ, որ այսչափ սեր ստացա մարդկանցից, որոնց ներսում Աստված կա:

Իմ Սեփական տան փնտրտուքների մեջ ես երեք տուն գտա: Շատ եմ ուզում կատարել նույն ճամփորդությունը, բայց դեպի հետ: Ուզում եմ վերադառնալ բոլոր Սեփական տներս ու գրկել ընտանիքներիս:

Եվգենիա Մելիոնյան՝
ուկրաինուհի, հայուհի, Մարդ
Բիայնա Մահարի

Լինել Լուգանսկից, սիրել Կիևը, ապրել Երևանում. «Սարծես այնպես լինեմ»

Երևանում արդեն կեսը կարի ապրող ուկրաինուհի Եվգենիա Սոկաչեկը պատմում է պատերազմի, իր մտերիմների ու երկու մայրաքաղաքների միջև ապրելու մասին:

Կրկնվող պատմություն

Ես Հայաստան եկա տասը տարի առաջ: Ծնվել եմ Ուկրաինայի Լուգանսկի շրջանում: Համալսարանն ավարտելուց հետո՝ մինչև Մայդանի դեպքերը, տեղափոխվեցի Կիև, իսկ հետո ամուսնացա ու եկա Հայաստան: Այդ տարիներին էլ սկսվեցին Ուկրաինայի ծանր ժամանակները: Մայդանից հետո խլեցին Ղրիմը, սկսվեց Դոնեցկի ու Լուգանսկի պատմությունը: Մինչ այդ, թեև Հայաստանում էի բնակվում, բայց միշտ գիտեի, որ կարող եմ վերադառնալ այնտեղ, տեսնել ընկերներիս, բարեկամներիս: Բայց 2014-ի պատերազմի արդյունքում նրանցից շատերը հայտնվեցին աշխարհի ամենատարբեր անկյուններում և այդ կետը, որտեղ ես կարող էի միշտ վերադառնալ, կարծես վերացավ: Երբ մինչ Հայաստան գալը տեղափոխվեցի Կիև, այնտեղ էլ բազմաթիվ ընկերներ գտա, արդեն ձևավորել էի նոր շրջապատ և ամեն տարի գնում էի բոլորին տեսնելու: Բայց այս պատերազմը կրկնեց նախորդի պատմությունը. Իմ բոլոր ընկերները կրկին աշխարհի հակառակ անկյուններում են:

Ապաստարաններում

Երկու ավագ քույրերս և նրանց երեխաներն Ուկրաինայում են: Առաջին օրերին ապաստարաններում էին գիշերում, իսկ ցերեկվա ժամերին վերադառնում տուն, լվացք անում, վերցնում անհրաժեշտ իրերն ու նորից իջնում ապաստարան: Վատն այն էր, որ այդ տարածքները պատրաստ չէին մարդկանց ընդունելու, ամենուր փոշի, կեղտ ու սարդոստայններ էին: Այդ պատճառով էլ քույրերս որոշեցին իրենց բնակարանի պատուհանները փակել ներքնակներով ու մնալ այնտեղ: Երեխաներին տեղավորեցին լոգարանում, քանի որ այն ամենաապահով վայրն է համարվում նման իրավիճակներում, իսկ մեծահասակները տեղավորվեցին միջանցքում: Երեք օր այդպես մնացին և, ի վերջո, որոշեցին փախչել:

Նստեցին գնացք ու մեկնեցին արևմուտք: Մեծ դժվարությամբ էին կարողացել հայտնվել այդ գնացքում: Մարդիկ բրդում էին իրար, կռվում տեղի համար: Մի օրվանից ավելի ճանապարհ պիտի գնային, իսկ գնացքի պատուհանները չէին բացվում, բոլորն իրենց վատ էին զգում, շնչելու օդ չկար: Սկզբում հասան Իվանո-Ֆրանկովսկ, որտեղ իրենց տեղավորեցին համալսարանի մարզասրահում ու մի քանի օր այնտեղ էլ քնում էին բարակ վերմակների տակ:

Դեպի արևմուտք

Բայց այդպես երկար շարունակվել չէր կարող: Ես մի ուկրաինացի ընկերուհի ունեմ, ում հետ ժամանակին բանկում էինք աշխատել: Մի քանի տարի առաջ զանգահարել էր ինձ ու խնդրել, որ մի քանի գիշեր իրեն մեր տանը հյուրընկալենք: Պարզվեց, որ նա վերջին տարիներին ճանապարհորդում էր աշխարհով, նվագում փողոցներում ու այդպես գումար վաստակում: Հիմա էլ հայտնվել էր Հայաստանում: Կամուկացի մեջ էի, բայց, ի վերջո, ամուսնուս էլ համոզեցի, ու նա մնաց մեր տանը: Այդ ժամանակ, իհարկե, չէի էլ պատկերացնում, որ մի օր նա ինձ կօգնի ու կփրկի ընտանիքս:

Կապվեցի իր հետ, պարզվեց կորոնավիրուսի պատճառով մի պահ դադարեցրել էր ճանապարհորդությունները ու հայտնվել Դրագոբրատում, որն Ուկրաինայի ամենաբարձր ու գեղեցիկ վայրերից է: Այնտեղ հրաշք բնություն է, լեռնադահուկային հանգստի գոտի կա: Նա էլ աշխատում է մի հոսթելում, որտեղ իր նման մարդիկ գալիս են հանգստանալու, մեդիտացիա անելու: Նրան խնդրեցի, որ քույրերս մի որոշ ժամանակ այնտեղ մնան:

Պայմանները, իհարկե, շատ լավը չեն, իրենց տրամադրված տարածքն իրականում խորդանոց է, որի համար, միևնույն է, պետք է ամսական 600 դոլար վճարեն: Բայց ստեղծված իրավիճակում, մեր իրականու-

թյան մեջ նույնիսկ այս փոքր սենյակը շատ ավելի լավ է, քան երբ ստիպված էին ապաստարաններում գիշերել կամ իրենց բնակարանի հատակին քնել։

Զորակոչում

Քույրերս չեն կարող դուրս գալ երկրից ու գալ ինձ մոտ։ Նրանցից մեկի որդին զորակոչման տարիքում է և նրան երկրից բաց չեն թողնի, իսկ մայրն էլ չի ուզում նրան այնտեղ միայնակ թողնել։ Սկզբից մտածում էինք մյուս քույրս իր աղջկա հետ ամեն դեպքում դուրս գա երկրից, բայց որոշեցին չբաժանվել։ Վերջերս էլ ծառայության ենթակա բոլոր երիտասարդներին զրանցում էին, որ եթե կարիք լինի, տանեն կռվելու։ Քրոջս որդուն մի կերպ թաքցրին։

Լուգանսկում էլ բարեկամներ ունեմ, այնտեղ բոլորին են ստիպում ծառայության անցնել։ Կարող ես պարզապես մեքենայով անցնելուց լինել, կանգնեցնեն քեզ, հանեն մեքենայից ու ստիպեն գնալ ծառայության՝ հանուն Լուգանսկի ու Դոնեցկի անկախության։ Այնտեղ տղամարդկանց ամենուր թաքցնում են։

Նավակով Մոլդովա

Մյուս ընկերուհիս հիմա արդեն Գերմանիայում է։ Միայնակ մայր է՝ երկու անչափահաս զույգ երեխաների հետ։ Կիևի հեռուստաաշտարակի պայթյունն իրենց մաշկի վրա են զգացել, քանի որ անմիջապես իրենց տան կողքին էր։ Հիմա այն պայմանները, որում ապրում են, մեղմ ասած, այդքան էլ լավը չեն, բայց առնվազն ապահով է։

Ամուսնուս եղբայրն էլ Կիևի մերձակայքի էլիտար բնակավայրերից մեկում է ապրում ու նույն օրը, երբ հղի կնոջը երկրից դուրս ուղարկեց, նրանց տան մոտ պայթյուններ եղան, բոլոր ապակիները կոտրվեցին, հետագայում էլ այդ տարածքի տների մեծ մասը հողին հավասարեցրին։ Այն տներում էլ, որոնք պահպանվել են, չեչեններ ու ռուսական բանակի այլ զինվորներ են մնում։

Շատերը տներից բացի իրենց ամբողջ ունեցվածքն են կորցրել, կյանքի գործը, գործարաններ, բիզնեսներ։ Տղամարդկանց երկրից դուրս չեն թողնում։ Չնայած, իհարկե, կան տարբերակներ։ Նավակներով աստղաբաշխական գումարներով մարդկանց տեղափոխում են Մոլդովա կամ այլ երկրներ, բայց երբեմն գումար ունենալն էլ չի օգնում։

Պարզ է, որ ոչ ոք չի ուզում զոհվել, պարզ է, որ սա քաղաքականություն է, մեծ խաղ. կանցնեն օրեր, գուցե տարիներ, բայց նորից կբարիշեն, իսկ մարդկանց այլևս հետ բերել չի լինի։

Մրջյուն Ուկրաինայում

Ես Հայաստանը սիրում եմ և մարդիկ հրաշալի են, բայց ես, անկեղծ ասած, այդպես էլ չինտեգրվեցի։ Մյուս կողմից՝ ինքս ինձ իմ տեղում չէի զգում նաև իմ ծննդավայրում։ Իմ կյանքը սկսվեց Կիևում, երբ հայտնվեցի այնտեղ ու սիրահարվեցի։ Դա կարելի է նկատել նույնիսկ իմ խոսելու ձևից։ Տասը տարի է, ինչ ապրում եմ այստեղ, բայց կարող եմ ասել, օրինակ՝ ձեր եղանակը լավն է, իսկ մեզ մոտ այդքան էլ չէ՝ նկատի ունենալով Կիևը։ Տարին երկու շաբաթով միշտ մեկնում եմ Կիև և հենց այնտեղ ինձ զգում եմ ինչպես ձուկը ջրում։ Աղջկաս էլ եմ միշտ ինձ հետ եմ տանում, փորձում եմ փոխանցել նույն սերը իր երկրորդ հայրենիքի նկատմամբ։ Նա իրեն այնտեղ էլ է լավ զգում և միշտ նշում է, որ և՛ հայ է, և՛ ուկրաինացի։ Հիմա շատ լավ հասկանում է, որ մի բան այն չէ, իրեն քույրերիս նկարներն էի ցույց տվել ապաստարաններից ու նկատում եմ, երբ մի բան է հիշում Ուկրաինայի մասին, հուզվում է։ Ես էլ երբեմն ինձ դժվար եմ զսպում, բայց գիտեմ, որ մենք ապահովության մեջ ենք, իսկ կարող էինք այնտեղ լինել։ Որքանով էլ, որ Հայաստանում եմ վերջին տասը տարին, բայց այս ամենը հին էմիգրանտի պես չեմ ընկալում, կարծես այնտեղ լինեմ։

Մարգարիտ Միրզոյան
Վիլյամ Սարաբեգյան

ԲՈԼՈՐԻ ՏՈՒՆԸ. Rambalkoshe-ի արտ ռեզիդենտները

ԵՐԵՎԱՆՆ գնայել էր Rambalkoshe ժամանակակից արվեստի թանգարան՝ կրուցելու հիմնադիր, լուսանկարիչ Վահան Ստեփանյանի և այնտեղ արդեն մոտ մեկ ամիս ապրող Ռուսաստանից եկած երկու կույսի հետ: Սոֆիան և Սաշան, Միշան և Զլատան պատմել են իրենց վերջին շրջանի իրականության մասին:

Վահան Ստեփանյանն ասում է՝ եթե դառնում ես Rambalkoshe-ի ռեզիդենտ, ապա դառնում ես այդ տան տերը, բայց տունը շարունակում է ապրել իր կյանքով, առօրյան և իրադարձությունների շղթան չեն խախտվում: Մարտի սկզբից Rambalkoshe-ը դարձել է Ռուսաստանից եկած Սաշայի, Սոֆիայի, Միշայի և Զլատայի տունը:

Բլինչիկ ու լեռնային փունջ

Վերջին անգամ այստեղ եղել էի ԵՐԵՎԱՆի 10-ամյակի միջոցառման օրը: Մարդիկ, խոսակցություններ, երաժշտություն, գինի... Իսկ այսօր՝ առավոտյան 11-ի մոտակայքում, Rambalkoshe-ում առաջին հայացքից մարդ չկա: Թելիսը՝ տան պահապան շունը, դիմավորում է դարպասների մոտ ու տանում դեպի տուն: Սենյակներից մեկում գտնում եմ Սոֆիային և Սաշային: Սոֆիան արագ գալիս է խոհանոց, սեղանին դնում թարմ բլինչիկները, մուրաբան ու թեյը: Ասում է, որ հատուկ մեր հանդիպման առիթով է պատրաստել, իսկ «Լեռնային փունջն» իր ամենասիրելի թեյն է դեռ նախորդ այցերից: Այդպես նստում ենք Rambalkoshe-ի խոհանոցում, նախաճաշում և սկսում զրուցել:

Սոֆիան նախկինում Հայաստանում շատ է եղել, նվագել տարբեր միջոցառումների ժամանակ: Այստեղ ընկերներ շատ ունի, նրանցից մեկի միջոցով էլ ծանոթացել է Վահանի հետ և հայտնվել Rambalkoshe-ում: Սաշան Հայաստանում երբեք չէր եղել ու պատկերացում չուներ, թե որտեղ է գալիս, բայց ասում է, որ Երևանն իրեն իր մանկության քաղաքն է հիշեցնում. կլիման, ծառերը շատ նման են:

«Այստեղ, երբ հարցնում են՝ կարո՞ղ ենք օգնել, չեն ասում ուղղակի ասելու համար»,– վստահ է Սոֆիան

Կապույտ անձնագիրը

Սաշան ծնվել է Իզմայիլում, որն Օդեսայի շրջանի հարավային քաղաքներից է: Հետո երկար ապրել է Մոսկվայում և կապույտ՝ ուկրաինական անձնագիրը կյանքում չի խանգարել իրեն: Բայց պատերազմի սկզբից լուրեր էին պտտվում, որ ուկրաինացիներին կալանավորելու փորձեր են արվում: Հյուպատոսարանը լքել էր երկիրը. Մոսկվայում մնալն այլևս անվտանգ չէր:

Տխրությամբ հիշում են, որ այնտեղ են թողել Ստասին՝ իրենց կատվին: Սաշան, ցույց տալով իրենց երեքի վերջին ընտանեկան լուսանկարը ճամպրուկների հետ, ասում է. «Նաև շատ իրեր ենք թողել, մեր սիրելի նվագարկիչը, հարյուրավոր

↑ Զլատան և Միշան

վինիլային ձայնապնակներ՝ ամբողջ կյանքը: Վերցրել ենք միայն շորեր ու աշխատանքային տեխնիկա»:
Սոֆիան սրճեփի մեջ ջուր է լցնում, դնում կրակի վրա, որ նորից թեյ պատրաստի ու ասում է, որ հիմա անհամեմատ հանգիստ է, բայց սկզբում այդպես չէր: Հայաստան գալուց բարդություններ եղան: Թռիչքի ժամանակ օդաչուն երեք անգամ հայտարարում էր, որ հիմա կթռչեն, դռները փակվում էին, բայց քիչ անց նորից բացվում, ներս էին մտնում ոստիկանները, սկսում հարցեր տալ: Մինվոդիում Սաշայի անձնագիրը երկու ժամով վերցրել էին ու, եթե մյուս թռիչքը չուշանար իր ժամից, իրենք այն բաց էին թողնելու: Հասնելուց հետո թռիչքի խուճապը փոխարինվեց ապագայի մասին մտքերով, բայց երկուսն էլ ասում են, որ այստեղ իրենց այնքան լավ ընդունեցին, որ այսօր արդեն իրենց զգում են այնպես, ինչպես իրենց տանը, հանգստացել են:
«Այստեղ, երբ հարցնում են՝ կարո՞ղ ենք օգնել, չեն ասում ուղղակի ասելու համար: Նրանից է, որ դուք էլ ձեր փորձից գիտեք, թե պատերազմն ինչ բան է»,– վստահ է Սոֆիան:

Ծնողներին բերել Հայաստան

Սաշան օրվա կեսն անցկացնում է հեռախոսի մեջ: Իր ծնողները հայտնվել էին հրետակոծության տակ և միայն մեկ շաբաթ անց հնարավոր եղավ նրանց էվակուացնել: «Այս պահին կամավորների մոտ են ապրում Լեհաստանում: Փորձում եմ իրենց փաստաթղթերը դասավորել, որպեսզի կարողանան մեկնել բարեկամների մոտ՝ Ռումինիա, որտեղից ավելի հեշտ կլինի հասնել Ուկրաինայի ապահով հատվածներ»:
Նրա խոսքով, միշտ էլ գիտեին, որ կա տարածքային կոնֆլիկտ, բայց այն տևում էր երկար տարիներ և արդեն սովորական երևույթ էր դարձել: Դրա համար էլ շատ չէր հետևում նորությունների և կես օր ուշ իմացավ, որ հնարավոր էր այդ օրը էվակուացնել ծնողներին: Սոֆիայի մայրիկն ու եղբայրը մնացել են Մոսկվայում: Նրա հիմնական միտքն այս պահին այն է, որ պետք է շատ փող վաստակել և նրանց էլ բերել Հայաստան:

Նորից կառուցելու Ուկրաինան

Սոֆիան եռացած ջուրը թեյնիկի մեջ է լցնում, որ «Լեռնային փունջը» թրմվի ու ասում, որ դպրոցականների պես են զգում, ովքեր ուսումն ավարտելուց հետո մեկնել են ուրիշ երկրում այն շարունակելու: Նրանք սկսել էին հանդիպել քովիդի համաճարակի ժամանակ և նախորդ աշնանն ամուսնացել էին: Արդեն պատրաստվում էին տուն գնել, երեխաներ ունենալ, բայց եղավ պատերազմը, իսկ հիմա Rambalkoshe-ի խոհանոցում փորձում են պատկերացնել իրենց ապագան:
Հարցերի մեծ մասին են պատասխանում ու հետո ծիծաղելով պատմում, որ իրենց մոտ այդպես շատ է լինում, երբեմն նույն նախադասություններով կարող են խոսել:
«Մենք Ռուսաստան չենք վերադառնա,– ասում են երկուսով,– սկզբում ասում էինք, որ չենք վերադառնա մինչև չփոխվի կառավարությունը, բայց գնալով հասկանում ենք, այնտեղ շատ քիչ աղեկվատ մարդ է մնացել, բացի այդ, տնտեսությունը դեռ երկար պիտի վերականգնվի»:
Ներս է մտնում Միշան՝ տեսնելու, թե ինչ է կատարվում խոհանոցում: Միշան, չնայած դեղին ներկված մազերին, արտաքնապես նման է տեղացու: Զլատան, ով ներս է մտնում

ամուսնու հետևից, ասում է, որ արդեն ավարտել են լուսանկարվելը: Նրանք իմ հաջորդ զրուցակիցներն են: Որոշում ենք տեղափոխվել ներսի սենյակներ ու այնտեղ շարունակել զրույցն արդեն իրենց հետ: Սոֆիան ճանապարհելով ասում է՝ քննարկել ենք մեր ընկերների հետ. եթե պետք լինի գնալ և նորից կառուցել Ուկրաինան, մենք էլ կգնանք:

Ներքևի հարկ

Մինչ Ramballkoshe-ում բնակություն հաստատելը Սաշան ու Սոֆիան ծանոթ չէին ներքև հարկում հարկում ապրող Միշայի ու Զլատայի հետ: Նրանց իրավիճակն այլ է. որոշել են վերադառնալ Ռուսաստան:

Միշան կողքի սենյակից բազկաթոռներ է բերում ու դնում դրանք պատին փակցված Դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիքի» պաստառի մոտ: Տեղավորվելով բազկաթոռների մեջ՝ սկսում ենք մեր զրույցը: Ի տարբերություն Միշայի՝ Զլատան ընդհանրապես նման չէ տեղացու ու ինչպես պարզվեց խոսակցության ընթացքում, երևանցիները դա նույնպես նկատում են: Միշան, վառելով ծխախոտը, հիշում է, որ սկզբում խուճապի մեջ էին, որոշել էին լքել երկիրը և այլևս չվերադառնալ: Մի որոշ ժամանակ մտածելուց հետո որոշեցին դեռ երկու շաբաթով մեկնել, հանգստանալ, սթափվել ու մտածել: Այս պահին վերադառնում են, որպեսզի անձնագրերը ստանան, վերցնեն կատվին, գուցե իրերի մի մասը տան բարեգործության, որ ամեն դեպքում շարժունակ լինեն: «Մենք նույնիսկ օտարերկրյա անձնագրեր չունեինք, բայց Զլատան շատ անհանգիստ էր, որ ինձ կարող են զորակոչել բանակ, իսկ ես անհանգիստ էի նրա հոգեկան վիճակի համար»,– պատմում է նա:

Զլատան էլ շարունակում է, որ նաև անհանգիստ էր ինքն իր համար: Վերջին շրջանում հակապատերազմական պաստառներ էր նկարում, մասնակցում ցույցերի: Այն ժամանակ գուցե 15 օրով նստացնեին, իսկ այսօր այդ ժամկետն արդեն կարող է հասնել մինչև 15 տարի: Երբ որոշում կայացրին մեկնել, Զլատան իր կուրատորին ասաց, որ մի որոշ ժամանակ չի գալու դասի, վախենում է ամուսնու համար, պետք է երկրից գնան: Կուրատորն էլ ասեց, որ մի ընկեր ունի Հայաստանում, ով պատրաստ է իրենց ընդունել, լավ է գնան և այլևս չվերադառնան: Այդ կուրատորը Վահան Ստեփանյանի ընկերն էր, ով ժամանակին եղել է Հայաստանում: Նկարիչ է, որին հրավիրել էր ԹՈՒՄՈ-ն վարպետաց դասի համար: Հետո նա եկել էր Ramballkoshe միջոցառման, որտեղ էլ ծանոթացել էին, երկար զրուցել և Վահանն իրեն առաջարկել էր գիշերել այնտեղ: Նաև պատմել էր, որ տունն արտ-ռեզիդենցիայի ֆորմատի մեջ է և նա կարող է գալ, երբ ցանկանա, քանի որ այն արդեն իր տունն էլ է: Արդյունքում եկան Միշան ու Զլատան:

Սուն ու ցոն

Երկուսն էլ ասում են, որ երբեք չեն ցանկացել հեռանալ Ռուսաստանից, այն իրենց տունն է, իսկ տանը կարող է լինել և՛ լավ, և՛ վատ: Մինչ Հայաստան գալը նրանք չգիտեին, որ այստեղ էլ է պատերազմ եղել: Ramballkoshe-ի

Սոֆիան ճանապարհելով ասում է՝ քննարկել ենք մեր ընկերների հետ. եթե պետք լինի գնալ և նորից կառուցել Ուկրաինան, մենք էլ կգնանք

→ Սոֆիան և Սաշան

հավաքույթների ժամանակ մարդիկ իրենց պատմում էին տեղի ունեցածի մասին, կիսվում իրենց փորձով և դա շատ օգնում էր։
Մի պահ սենյակ է մտնում Վահանը։ Մինչ մենք զրուցում էինք, նա նաև հասցրեց նկարել Սոֆիային և Սաշային և արդեն պիտի գնար։ Նրան հրաժեշտ տալուց հետո հանգցնելով ծխախոտը՝ Միշան հիշում է՝ «Վահանն ինձ մի անգամ ասեց՝ քանի որ Հայաստանը փոքր երկիր է, այստեղ ցավն ու կորուստն էլ ես ավելի ուժեղ զգում»։ Այդ ամենից հետո Միշան իր համար որոշել էր ամեն օրը վերջին օրվա պես ապրել։ Ասում է՝ եթե վաղը լինելու է ապոկալիպսիս, ինչո՞ւ այս օրը տոն չդարձնենք։ Վահանի խոսքերից հետո ավելի շատ համոզվեց, որ պետք է վերադառնալ տուն. եթե ցանկացած հաջորդ օրը կարող է վերջինը լինել, ավելի լավ է այդ տոնը կազմակերպել տանը։
Միշայի աշխատանքը հեռավար է Ռուսաստանի ամենաշատ պատժամիջոցների տակ ընկած բանկերից մեկում։ Նա փորձում է այս ամենում դրական կողմեր տեսնել։ Այն, որ նոր պրոդուկտներ պիտի մշակեն, որոնք նախկինում Ռուսաստանում չեն եղել, քանի որ հիմա մնացել են միայնակ։ Որպես կերամիկայի մասնագետ՝ Զլատան աշխատում է ներառական վարպետարանում, որտեղ կան մտավոր առանձնահատկություններ ունեցող շատ մարդիկ։ Պատմում է, որ հիմա վարպետարանի համար շատ դժվար ժամանակներ են, հումքը չեն ներկրում, խանութները փակ են, մարդիկ չգիտեն ինչ է լինելու։ Դա է պատճառը, որ իրեն այդքան դժվար է Ռուսաստանից հեռանալ։
««Էխո Մոսկվայի»-ի Վենեդիկտովն ասում էր՝ պատմության դասագրքում ապրելը սարսափելի բան է։ Չգիտես ինչի վրա հույս դնես, նույնիսկ լավ լինելու հույս էլ չկա», ասում է Զլատան։ Բայց մի պահից հուսահատված տոնը մի կողմ դնելով՝ վստահ ձայնով ասում են, որ ամենամութ ժամը լուսաբացից առաջ է և նրանք չեն ուզում անվերադարձ գնալ Ռուսաստանից, որպեսզի տեսնեն այդ լուսաբացը։

Արտ ռեզիդենցիա

Թեև Միշան ու Զլատան շուտով գնում են, բայց Սոֆիան և Սաշան դեռ կմնան այս տան տերերը։
Վահան Ստեփանյանն ասում է, որ ի սկզբանե Ramballkoshe-ի գաղափարներից մեկը հենց արտ ռեզիդենցիան էր։ Տարբեր ժամանակներում տունը պարբերաբար բնակիչներ է ունեցել։ Այսինքն՝ արտ ռեզիդենցիան տրամաբանական զարգացում է տան համար։ «Դեռ ֆորմալ հայտարարություն չէինք տվել։ Մտածում էինք, որ դեռ չունենք համապատասխան պայմաններ,– պատմում է Վահանը,– երբ մեր հյուրերը Ռուսաստանից եկան, առաջին օրն ուտելիք սարքեցինք, հրավիրեցինք իրենց ընկերներին ու մեր ընկերներին։ Այդ օրն էլ հասկացանք, որ մարդկային մակարդակում պատրաստ էինք ռեզիդենտներ ընդունելու»։
Զլատան իր պաստառներից մի քանիսը տպել կպցրել է Ramballkoshe-ի պատերին, Սոֆիան պարբերաբար նվազելու է տարբեր միջոցառումներին։ Ramballkoshe-ի արտ ռեզիդենտներն ինքնաբերաբար կանխորոշել են տան տրամաբանական շարունակությունը։
Վահանը վստահ է, որ շատ մարդիկ կարող էին գալ, շատերն են հիմա տուն փնտրում, այն էլ Կոմիտասում և անվճար, բայց բոլորը պատրաստ չեն նման ֆորմատով ապրել։ Բայց Ramballkoshe-ում հայտնվեցին մարդիկ, ովքեր արվեստի մեջ են այս կամ այն կերպով։
«Չեմ կարծում, որ դա պատահականություն էր, որ հենց արվեստի հետ կապ ունեցող մարդիկ են հայտնվել այս տանը։ Երևի կապ ունի քո անցած ճանապարհը, շրջապատը, ոնց ես նայում աշխարհին, որքանով է միտքդ ազատ»։

Մարգարիտ Միրզոյան
Վահան Ստեփանյան

Նկարազարդման նախաճաշ

↑↓ Պոլինա Կալաշնիկովա

Ժամանակավորապես Երևան տեղափոխված ռուսաստանցի նկարչուհի Պոլինա Կալաշնիկովան մարտին կազմակերպեց «Նկարազարդման նախաճաշ» հավաք-միջոցառումների շարքը: Բոլոր ցանկացողները ամեն շաբաթ հավաքվում էին Պոլինայի ընտրած մի որևէ սրճարանում, նախաճաշում, շփվում ու նկարում՝ սրճարանը, աշխատողներին, այցելուներին: Հավաքվեց մի ամբողջ երևանյան նախաճաշային շարք:

↑ Ողինա Սարգսիկովա

←↓ Նատալյա Միրզոյան

Սասուն Շարոյան

→ Օլգա Պրաշնիկ

↓ Ալոնա Վորոնինա

← Սայա Փիսեյուխ

↑ Լյուսի Սիրիրկա

↓ Մարիա Գոլուբկովա

Պոլինա Կալաշնիկովա

«Ով ցանկանա, կարող է միանալ մեզ, նկարել, նախաճաշել, նոր մարդկանց հետ ծանոթանալ: Գլխավորը՝ նկարչական պարագաներ լինեն ձեռքի տակ: Սա աշխատարան կամ վարպետաց դաս չէ, պարզապես ընկերական խմբակային նկարչություն, իսկ նախաճաշի համար ամեն մեկը վճարում է իր համար: Մեզ համար գլխավոր նպատակը համախոհների շրջանակի ձևավորումն է: Մեզ միանում են նկարիչներ, նկարազարդողներ, անիմատորներ և ստեղծագործ աշխատանքի շատ ուրիշ մարդիկ՝ և ռուսաստանցի, և հայաստանցի»:

←↓ Աշխեն Մուրադյան

CAMERATA FEST YEREVAN

Մեծ, հավես ու օգտակար

Ապրիլի իններին Երևանի միանգամից մի քանի հարթակներում տեղի ունեցավ Camerata երաժշտական փառատոնը՝ Ռուսաստանից տեղափոխվածների կազմակերպած առաջին մեծ միջոցառումը, որին մասնակցեցին ինչպես ռուս, այնպես էլ հայ երաժիշտներ (ռոք և էլեկտրոնային), իսկ հասույթը փոխանցվեց Ուկրաինայում ու Արցախում ռազմական գործողություններից տուժած խաղաղ բնակիչներին: Ահա թե ԵՐԵՎԱՆԻՆ ինչ պատմեցին փառատոնի կազմակերպիչները (իրենց խնդրանքով՝ նշում ենք միայն անունները):



Իլյա

Փառատոն գաղափարը ծնվեց մի պարզ նախաձեռնությունից՝ ապրիլի սկզբին կազմակերպել պետերբուրգյան Sonic Death խմբի համերգը Երևանում: Բայց հետո մի օր հավաքվեցինք բարում ու հասկացանք, որ հիմա շատ լավ պահ է տարբեր երաժիշտների միասին հավաքելու, քանի որ իրենք ունեն լիցք ու նվագելու ցանկություն, մենք էլ՝ մեծ հավես օգտակար իրադարձություն կազմակերպելու: Նաև հասկացանք, որ չենք ուզում կազմակերպել ուղղակի համերգ, այլ նաև օգնել այն մարդկանց, որոնք այսօր հայտնվել են շատ ծանր իրադրության մեջ զինված բախումների պատճառով:

Մոտավորապես մի երեկոյի ընթացքում ծնվեց բարեգործական փառատոնի կոնցեպտը. ի սկզբանե պլանավորված էր երկու օր, արդյունքում դարձավ երեք, և մենք ամեն ինչ կազմակերպեցինք բառացիորեն մեկ ու կես շաբաթվա ընթացքում՝ կոնցեպտի մտահղացումից մինչև մեկնարկ: Ծրագրում պահպանում էինք որոշակի երկվություն. սկզբից երկու օր էր, երկու գլխավոր ժանր, երկու հարթակ: Հետո դրանից մի փոքր շեղվեցինք, բայց մեծ հաշվով այդ երկվությունը պահպանվեց: Էլեկտրոնային և ռոք բեմերը, հայ և ռուսաստանցի ունկնդիրները, ցերեկային ու գիշերային ծրագրերը:

Երբ գլուխ հանեցինք, թե ոնց ենք ուզում այդ ամենն իրականացնել, սկսեցինք հավաքել երաժիշտներին: Ընդհանուր առմամբ, ամեն ինչ օրգանիկ ու պարզ ստացվեց: Մեր թիմում կան տարբեր երաժշտական բեքգրաունդ ունեցող մարդիկ, այնպես որ մասնակիորեն բաժանեցինք կոմունիկատիվ մասը երաժիշտների հետ. մեկս ավելի շատ շփվում էր ռոք երաժիշտների հետ, մյուսը՝ էլեկտրոնային, այդ կերպ ստացանք երկու զուգահեռ լայնապ, պայմանավորվեցինք բոլորի հետ ու հավաքեցինք մեկտեղ:

Սաշա

Ժամանման պահից արդեն հասցրել էինք ինքներս ներկա գտնվել թե՛ դիջեյների, թե՛ փանք-խմբերի ելույթներին, հետն էլ ծանոթանալ համերգային հարթակներին, դրանք էստեղ այդքան էլ շատ չեն, դրա համար էլ ընտրությունը երկար չտևեց: Bak75-ը դարձավ ակնհայտ ընտրություն մեր կիթառային բեմի համար, որը փառատոնի երկրորդ համերգային օրն էր, Fermata ակումբն ընտրեցինք բարեհամբույր ադմինիստրացիայի ու լավ տեղական ձայնի համար, Միրզոյանն էլ մեզ թվաց կատարյալ հարթակ՝ ակուստիկ ծրագրով փառատոնն ավարտելու համար, պարզվեց՝ չէինք սխալվել:

Փառատոնի մասին ինֆոն տարածեցինք զլմներով ու տելեգրամ-ալիքներով, իսկ մեր ընկերներն ու կամավորներն օգնել էին գրառումները թարգմանել հայերեն ու աֆիշներ փակցնել ամբողջ քաղաքով, ինչի համար շատ շնորհակալ ենք: Գովազդի նման ձևաչափը Մոսկվայում արդեն գրեթե մոռացված մեթոդ է, այնինչ միշտ հաճելի է տեսնել համերգիդ պաստառը, երբ զբոսնում ես քաղաքով:





Կատյա

Փառատոնի ընթացքում հավաքել ենք 4,668,240 դրամ, ինչը հավասարապես բաշխելու ենք հինգ հիմնադրամի միջև: Բոլոր միջոցներն ուղղվելու են խաղաղ բնակիչներին, որոնք տուժել են Ուկրաինայում ու Արցախում ռազմական գործողություններից, կամավորներին, որոնք փրկում են կենդանիներին զինված հակամարտությունների գոտիներից, բացի այդ նաև ՕՎԴ-Ինֆո-ի ռուսաստանյան իրավապաշտպաններին:

Այս կերպ ցանկանում ենք աջակցել Ուկրաինայի քաղաքացիներին, ովքեր տարբեր պատճառներով չեն կարող լքել երկիրը, Արցախի տուժած բնակիչներին, որոնցից շատերը կորցրել են իրենց տները և մարդկանց, ովքեր, չնայած ամեն ինչին, շարունակում են պաշտպանել քաղաքացիական կյանքը, բռնաճնշումների ենթարկված ռուսների իրավունքները:

Երկար էինք մտածում՝ ինչպես ճիշտ կազմակերպել միջոցների փոխանցումը. ստեղծված իրավիճակից ելնելով բազմաթիվ սահմանափակումներ կան: Բայց ի վերջո որոշեցինք փորձել հայկական բանկային քարտից փոխանցում կազմակերպել կամավորական կազմակերպություններին, իսկ ձախողման դեպքում կօգտագործենք կրիպտոարժույթ:

Մաքս

Այսքան խիտ ժամկետում այս կարգի լայնամասշտաբ միջոցառում կազմակերպելը մեզ առաջին հերթին սովորեցրեց այլևս երբեք նման բան չանել, թեև պարզ էր, որ կարիքը կա հենց հիմա ու հետաձգել պետք չէ: Սա առաջին հետևությունն է, որն արեցինք, իսկ երկրորդը շատ ավելի լավատեսական է. անհնարը հնարավոր է, եթե իրար գլուխ հավաքվեն զիլ մարդիկ, որոնք պատրաստ են գործել ու օգնել միմյանց:

Թեև կային որոշ թերացումներ, սակայն կազմակերպման ընթացքում ոչ ոք չանհետացավ, չկորավ, չթռավ, բոլորն աշխատում էին գրեթե ինքնուրույն, առանց որևէ հիշեցումների ու արտաքին վերահսկման: Մեծ փորձ ունեմ նմանատիպ միջոցառումների, բայց այսպիսի բան առաջին անգամ եմ տեսնում: Անհավատալի է: Դրան գումարած մեծ աջակցություն ստացանք տեղական երաժշտական համայնքից, սա էլ էր մեզ համար հաճելի անակնկալ, օգնեցին կոնտակտներով, տեխնիկական մասով, ուղղակի մի լավ գաղափարի շուրջ միավորում էր: Մեզ դա շարունակելու մեծ լիցք տվեց, հասկացանք, որ անհրաժեշտ գործ ենք անում, շատերն ասում էին, որ այստեղ նման բան չի եղել: Շարունակելու ենք միջոցառումներ անել, հնարավորինս միջազգային՝ ներգրավելով տարբեր արտիստների, բացի այդ անենք այնպես, որպեսզի և տեղական, և ռուս լսարանը նոր բան տեսնի, սովորի, կրթվի: Նաև նախատեսում ենք բոլոր միջոցառումներն այս կամ այն կերպ անել բարեգործական, գուցե ոչ ամբողջությամբ, բայց թեկուզ մասնակի:

Դիանա Մարտիրոսյան
Բիայնա Մահարի

Պլանավորման հորիզոնը՝ 30 րոպե

Ռուսաստանից եկող ռելոկացման ալիքի հետ Սանկտ Պետերբուրգից ամերիկյան One Market Data LLC-ի կապմի մեզ մտնող հայաստանյան OMD LLC ընկերության գրասենյակ տեղափոխվեց նրանց գործընկեր Big Data Solutions-ի թիմը:

Ռուսաստանցի հյուրերը պատմել են Երևանում նոր կյանք սկսելու և ոչ շատ հստակ ապագայի մասին:

«Երազ» բիզնես կենտրոն հասանք ճաշի ժամին: Բարդ, լաբիրինթոս հիշեցնող ճանապարհներով բարձրացանք OMD-ի գրասենյակի երկրորդը հարկը, որտեղ էլ վերանորոգումից հետո նոր-նոր տեղավորվել էին Ռուսաստանից ժամանած մասնագետները: Պետերբուրգյան թիմի մեծ մասը դեռ չէր վերադարձել ընդմիջումից: Մեզ ասացին, որ նրանք կամ ճաշում են, կամ ծխում բակի տարածքում, և կարող ենք այդ ընթացքում փորձել զրուցել: Գնացինք իրենց փնտրելու նույն խառը ճանապարհներով:

Ճաշող ժողովուրդը խնդրեց, որ հետո զրուցենք, իսկ ծխողներին պարզապես չգտանք: Երբ վերադարձանք վերևի հարկ, մի քանիսն արդեն վերադարձել էին և ականջակալներով միացել իրենց հեռավար հանդիպումներին: Խանգարելով, ինչպես պարզվեց, պետերբուրգյան թիմի գլխավոր նախագծերի ղեկավար Նատաշային՝ խնդրեցինք, որ մեզ մի որոշ ժամանակ տրամադրեն ու պատմեն իրենց տեղափոխությունից:

Թիմով Երևան

«Մենք թիմում մի կատակ ունենք,– ասում է Նատաշան,– որ ամենահեռու բանը, որը կարող ենք այս պահին պլանավորել, մեր ընդմիջումն է: Պլանավորման հորիզոնը դարձել է 30 րոպե»:

Երբ որոշում կայացվեց տեղափոխվել, թիմում կային մարդիկ, ովքեր մի կամ երկու ամիս է ինչ միացել էին ընկերությանը, ու քանի որ վերջերս համավարակի պատճառով ամբողջ թիմն աշխատում էր հեռավար ձևաչափով, շատերն իրար նույնիսկ չէին ճանաչում: Big Data Solutions-ի աշխատակիցների՝ Հայաստան տեղափոխելու որոշումն անհրաժեշտ էր, քանի որ աշխատանքը մեծապես կապված է ամերիկյան շուկայի հետ և հաշվի առնելով աշխարհաքաղաքական իրավիճակն ու Ռուսաստանի վրա ժամ առ ժամ ավելացող պատժամիջոցների թիվը՝ աշխատանքը զնալով անհնար էր դառնալու:

Տեղափոխությունը պարտադրանք չէր, բայց այն մասնագետների հետ, ովքեր չկարողացան տեղափոխվել BDS-ից OMD, ընկերությունը ստիպված եղավ դադարեցնել համագործակ-



Ամերիկյան OneMarketData-ն ծրագրային ապահովման և տվյալների առազարար մատակարար է ֆինանսական ոլորտի համար: 2007 թվականին բացված OMD LLC-ն հանդիսանում է OneMarketData LLC-ի դուստր ձեռնարկություն: Շուկայական տվյալների պահպանման, վերլուծության և իրադարձությունների համալիր մշակման (CEP) լուծումների առազարար ընկերություն է: Պետերբուրգյան Big Data Solutions ընկերությունը բացվել է 2016 թվականին և հանդիսանում է OneMarketData LLC-ի վարգացման պաշտոնական բացառիկ գործընկերը:



ցությունը: Հայաստանն ամենաօպտիմալ տարբերակն էր տեղափոխության համար: Նախ՝ Երևանում արդեն 15 տարի է, ինչ գործում էր ամերիկյան գրասենյակից ընդամենը մեկ տարի անց բացված երևանյան ընկերությունը: Բացի այդ, թիմից շատերը նախկինում եղել էին Երևանում աշխատանքային այցերով, շփվել ու աշխատել տեղացի գործընկերների հետ:

Դոբերմանը

Նատաշան Հայաստանում նախկինում եղած աշխատակիցներից է, ով պարբերաբար մեկ ամսով եկել ու ապրել է այստեղ երևանյան գրասենյակի հետ փոխանակման ծրագրով: Ընկերությունում աշխատում էր շուրջ չորս տարի ու, երբ կանգնեցին տեղափոխման խնդրի առաջ, նրան այդ որոշումն ավելի հեշտ տրվեց, քանի որ հասկանում էր, թե որտեղ է գնում և ինչպիսի մարդկանց մոտ: Քաղաքը ևս իրեն հոգեհարազատ էր. հասկանում էր ինչ ռիթմով է այն ապրում: Թեպետ, միևնույն է, սթրեսային իրավիճակ էր: «Ես մեկնեցի Պիտերից խուճապահար վիճակում: Հոգեբանորեն դժվար էր, երբ ամեն պահ իրավիճակը փոխվում է,– ասում է նա,– բացի այդ, լավ է ապրել մի երկրում, որտեղ անվտանգ է, գործում են հյուպատոսարանները»:
Տնտեսագետ Ալիան Ղազախստանից Պետերբուրգ էր տեղափոխվել ընդամենը դեկտեմբերին, թիմին միացել էր փետրվարին և ահա մարտին հայտնվել Երևանում: «Ես ունեի այլընտրանք՝ կորցնել աշխատանք ու մնալ երկրում, որտեղ պարզ չէ՝ ինչպես է զարգանալու աշխատաշուկան, քաղաքական ու տնտեսական վիճակը,– ասում է Ալիան,– բայց ինձ դուր էր գալիս աշխատանքը, թիմը և որոշեցի ամեն դեպքում տեղափոխվել»:
Ալիան նախկինում Հայաստան չէր եկել, բայց ուներ հայ ընկերուհի, ում հետ պարբերաբար կապի մեջ էր: Դեռ ապրում է հյուրանոցում և ամենայն հավանականությամբ կգնա Ղազախստան ծնողների մոտ, մինչև իր ամուսինը կարողանա գալ Սանկտ Պետերբուրգից և արդեն միասին որոշեն՝ որտեղ բնակություն հաստատել: Երևանը, ամեն դեպքում, մնում է գլխավոր հավակնորդների թվում:
Պետերբուրգյան թիմում կա շուրջ հիսուն աշխատակից: Այս պահին նրանցից 22-ն ընտանիքներով, զույգերով ու նույնիսկ ընտանի կենդանիներով տեղափոխվել են Հայաստան: Ի դեպ, շների և կատուների հարցը բավականին լուրջ է, քանի որ դժվարացնում է վարձակալությամբ բնակարանի որոնումները: Այդպես ռելոկացվող թիմի անդամներից մեկը Հայաստանի փոխարեն տեղափոխվեց Վրաստան, որտեղ նրան և իր դոբերմանին ավելի հեշտ էր բնակարան գտնել:

Օգնենք, որ չհոգնենք

Տեղափոխության և տեղավորվելու հետ կապված մի շարք հարցեր ընկերությունն իր վրա էր վերցրել: Երևանյան գրասենյակի մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետ Եվա Բախշինյանի խոսքով՝ ռուսներից շատերը կհիմնավորվեն այստեղ: «Այս պահին փորձում ենք օգնել կացության իրավունք, բանկային և սոցիալական քարտեր ստանալ»,– պատմում է նա: Ընկերությունը նաև փորձում է իր հյուսիսից եկած հյուրերին ինտեգրել այստեղի կյանքի մեջ: Դասընթացներ են կազմակերպում, ավելացրել են նրանց բոլոր թիմային չաթերում, որպեսզի միշտ տեղյակ լինեն միջոցառումներից և իմանան՝ որտեղ ուղղել իրենց հարցերը: Հարցերը լինում են ամենատարբեր տեսակի, սկսած՝ «որտե՞ղ մատնահարդարման գնալ», ավարտած՝ «որ՞ հեռախոսակապից օգտվել»:
Նատաշան պատմում է, որ տեղացիների օգնության հասնող բնավորությունը դեռ նախորդ այցերին է զգացել: Նա վերջին անգամ Հայաստանում եղել էր հոկտեմբերին իր ընկերոջ հետ: Թիմային չաթում հարցրել էր, թե ինչպես կարող է մեքենա կազմակերպել, որպեսզի հասնեն Դիլիջան: Գործընկերները ճշտել էին ժամն ու իրերի քանակը: Արդյունքում առավոտյան աշխատանքային օրով եկավ իրենց գործընկեր Կարենը և տարավ նրանց Դիլիջան: «Բաներ կան, որ դեռ չենք հասկանում՝ ինչպես անել, բայց հաշվի առնելով, որ ներքևի հարկում հարյուր հայ է նստած, որոնք ամեն վայրկյան օգնում են, դժվարություններն անհամեմատ քիչ են»,– ասում է Նատաշան:
Նատաշան, Ալիան ու թիմից այլ անդամներ անպայման ուզում են հայերեն սովորել, չնայած դժգոհում են, որ այբուբենը շատ բարդ է: «Հենց մի պահ մտածում եմ՝ ահա սովորեցի, օրինակ, ինչպես է գրվում և արտասանվում «ք» տառը, պարզվում է, որ այդ տառի ևս մի քանի հնչողություն կա»,– ասում է Նատաշան, ու նայելով ժամին մեզ քաղաքավարի հուշում է, որ ուշանում է իրենց հաջորդ հանդիպումից:
Գործը գործ է, չենք խանգարում, վերադառնում ենք նույն սենյակ, որտեղ մարդկանց թիվը կրկնապատիկ ավելացել է և բոլորը կրկին առցանց հանդիպումների մեջ են: Ուղևորվում ենք դեպի վերելակ, այն բացվում է և հայկական թիմից երկու հոգու հետ մտնում ենք ներս: Ծիծաղելով հարցնում են՝ «հը՞, լա՞վն են մեր սլավոն ընկերները»:

Մարգարիտ Միրզոյան
Բիայնա Մահարի

Նաս նե դագոնյատ

ԵՐԵՎԱՆԻ խնդրանքով ռելոկացիայի փորձագետ, հրապարակախոս Միքայել Զոլյանն այցելել է Երևանում անցկացվող մի քանի միջոցառման ռուս արտիստների ու հանդիսատեսի մասնակցությամբ և պատմել իր տպավորությունները:

Я знаю, отчего ты не можешь заснуть ночью
Мы с тобой одной крови.
Мы с тобой одной крови.

Аквариум feat. Զիվան Գասպարյան.
«Северный Цвет»

Նոյյան տապանը, ավելի ճիշտ Նոյյան ինքնաթիռը, հասավ Արարատյան դաշտավայր՝ բերելով ռուսաստանցի ծրագրավորողներին և ծրագրավորողուհիներին, նրանց երեխաներին, կատուներին և շունիկներին: Թվում էր, թե ես կարող եմ հանգստանալ և շարունակել տապակվել մեր հայրենի դարդերով, ինչպես և մենք բոլորս: Բայց այս ամսագրի խմբագիրն այլ կարծիքի էր: «Մի հատ նոր տեղ ա բացվել՝ ռելոքեյթներն են կազմակերպել, իրանց հավաքվելու տեղն ա, մեր լուսանկարչի հետ մի հատ գնացեք տեսեք ինչ ա, կարող ա մի բան էլ գրես»,– հրամայեց ֆեյսբուքով եկած վոյսը: Սկզբից առաջարկը խանդավառություն չառաջացրեց, և ես արդեն սկսեցի մտածել քաղաքավարի մերժելու տարբերակներ, բայց հետո հիշեցի, որ ինձ հրավիրել էին այդ «օբյեկտ» համերգի: Օբյեկտը գտնվում է Արամի փողոցում, կոչվում է «Տուֆ», իսկ ինձ կանչողը նյույորքա-մոսկվա-երևանահայ ծանոթս էր, որին պատահաբար հանդիպում եմ ամեն անգամ, երբ կյանքում պետք է սկսվի նոր փուլ:

Հայ պաշտոնյան «Տուֆում»

Երբ եկա համերգի, բարում արդեն համարյա տեղ չկար: Նվագում էր մի խումբ՝ կազմված ամերիկահայերից և երևանահայերից, իսկ հարվածային գործիքներին նստած էր ինչ-որ մեկը, ում չէի ճանաչում: «Ռուսներից կլինի», մտածեցի ես, բայց ամաչեցի հարցնեմ: Նվագում էին հավեսով ռոք, մի քիչ քանթրիի մոտիվներով. Բոբ Դիլանին դուր կգար: Մի կերպ խցկվեցի բեմի մոտ, որ ավելի լավ լսեմ, բայց հասկացա, որ այդտեղ երկար չեմ ձգի, մարդկանց խտությունը չափազանց մեծ էր: Դուրս եկա բակ, որտեղ հա՛մ երաժշտությունն էր լսվում, հա՛մ կարելի էր զրուցել, և, ավելին, կար թթվածին:

Համերգի ժողովուրդը բազմազան էր. երբ երաժշտությունը լռում էր, կարելի էր լսել խոսակցություններ և՛ հայերեն, և՛ անգլերեն, և՛ ռուսերեն: Հետաքրքիր էր, որ մարդիկ հիմնականում զրուցում էին իրենց նմանների հետ՝ հայաստանցիները՝ հայաստանցիների, սփյուռքահայերը՝ սփյուռքահայերի, ռուսաստանցիները՝ ռուսաստանցիների հետ: Դե ինչ անենք, քսանմեկերորդ դարն է, բոլորն ինտրովերտ են, social anxiety-ն մեզանից անպակաս:

Բայց կային նաև բացառություններ: Նկատեցի հայաստանցի պաշտոնյաներից մեկին, կոստյումով, թեև առանց փողկապի: Նա զրուցում էր դռեդերով ու հիփիական շորերով մի ռուս աղջկա հետ: Պարզվեց, որ դռեդերով աղջիկն այս օբյեկտի հիմնադիրներից էր, և յոգայի ուսուցիչ, նույնիսկ յոգայի իր սեփական դպրոցն ուներ: Պատմեց, որ հետաքրքիր պլաններ ունեն, իրենց մոտ լինելու են ոչ միայն համերգներ, այլև դիջեյ սեթեր, ստենդափ, և, անգամ, ինչ-որ խորհրդավոր անարխիստական վորքշոփներ (կամ գուցե ոչ այնքան անարխիստական, երաժշտությունը շատ բարձր էր): Յոգուհուն պատմեցի, որ երկու տարի առաջ յութուբում բացահայտել եմ ահավոր ակցենտով մի երիտասարդ հնդիկի տեսանյութ՝ «20 րոպե յոգա սկսնակների համար», և կյանքս փոխվել է: Հիմա իմ առավոտը չեմ պատկերացնում առանց սուրյանամասկարի և բիաստրիկա պրանայամայի, միս չեմ ուտում և երկրպագում եմ Շիվային: Դրեդերով աղջիկը չհասկացավ՝ լուրջ եմ խոսում, թե կատակ եմ անում, և որոշեց շառից-փորձանքից հեռու գնալ օբյեկտի գործերով զբաղվել:

Մնացինք հայ պաշտոնյայի հետ, սկսեցինք խոսել ռուսաստանցիների գալու մասին: Պատմեց, որ իրեն հրավիրել էին այս համերգին ռուսաստանցի գործարարները, ում հետ ծանոթացել էր տելեգրամի չաթերից մեկում: «Մտել էի, որ հասկանամ ինչ խնդիրներ ունեն, սկզբից չէին հավատում, որ իրոք պետական պաշտոնյա եմ, հետո բացվեցին, սկսեցին խոսել»,– պատմեց նա: Ինչպես միշտ, երբ քաղաքացին հանդիպում է իշխանության ներկայացուցչին, գանգատվում է կյանքից, և ես էլ սկսեցի գանգատվել անշարժ գույքի շուկայում տիրող խառնաշփոթից: Ռուս ընկերներս մի շաբաթ ինձ մոտ էին ապրում մինչև վարձով տուն գտան, հիմա էլ մի ուրիշ զույգի եմ սպասում, և չգիտեմ, թե ինչքան ժամանակ նրանք կմնան մոտս, մինչև նոր տուն գտնեն: Պաշտոնյան ասաց, որ գիտեն, որ այդ

խնդիրը կա, և զբաղվում են: Ռուս ընկերներիս մյուս բողոքները (մասնավորապես առ այն, որ խանութներում կաթը թանկ է և տեսականին փոքր է, իսկ սրճարաններում վաֆլին սխալ են սարքում), որոշեցի այս անգամ կառավարության ներկայացուցչին չփոխանցել: Առավել ևս, որ վաֆլիի հարցը կարծես իր լուծումն էր ստանում առանց կառավարության միջամտության. հենց այստեղ՝ «Տուֆում», երկու երիտասարդ ռուս տեղափոխվածներ իրենց փորձառությանը վայել վաֆլի էին սարքում, տեսքից դատելով՝ լավն էր:

C'est la vie

Ձեռներեց յոգուհուն և հայրենի պաշտոնյային հանգիստ թողնելով՝ սկսեցի հետևել համերգի ներկաներին: Համերգի ուրախ մթնոլորտը մի քիչ խաբուսիկ էր: Այստեղ հավաքվել էին մարդիկ, ովքեր ամեն օր սթրեսի միջով են անցնում: Մի կեսը թողել էր տուն ու տեղ, թողել էր իր ամբողջ կյանքը և պիտի հիմա նոր կյանք սկսեր մի նոր երկրում (որտեղ վաֆլին սարքել չգիտեն): Բայց մարդկանց մյուս կեսն էլ այնպես չէ, որ անդարդ էր. մենք էլ եկել էինք, որ գոնե մի քանի ժամ չմտածենք, թե ինչ է լինելու մեզ հետ այս աշխարհում, որտեղ նույնիսկ մեզնից տասնապատիկ մեծ երկրների ճակատագիրն է անորոշ: Եվ իհարկե, գիտակցության հեռավոր ծայրամասերում մի միտք, որ չէինք կարող չունենալ, և մենք, և ռուսները, և բոլորն այս երկրագնդի վրա: Ի՞նչ կլինի, եթե գերտերություններից մեկի առաջնորդը որոշի սեղմել կարմիր կոճակը: Երաժիշտները վերջացրեցին իրենց հիմնական ծրագիրը, բայց ժողովուրդը պահանջում էր, որ էլի նվագեն: Սկսեցին նվագել Տարանտինոյի Pulp Fiction-ի հայտնի ռոքնռոլը, որի տակ Ջոն Տրավոլտան ու Ուման Տուրմանը պարում էին իրենց անհույս պարը: «"C'est la vie", say the old folks, it goes to show you never can tell»,– եզրափակեց մտքերս Չաք Բերին:

Տատուի մարգարեությունը

Համերգը վերջացավ, յոգուհին, պաշտոնյան և մնացած բոլորը գնացին իրենց գործերով: Ես խոստացել էի կաթի և վաֆլիների սիրահարներ ռուս ընկերներիս ծանոթացնել երևանյան գիշերային կյանքին, բայց նրանք ավելի ուշ պիտի միանային: Գնացի ակումբներից մեկը, որտեղ այդ օրը հերթով նվագում էին տեղական և տեղափոխյալ դիջեյները: Փարթիի ժողովուրդն էլ էր խառը՝ պարահրապարակում ռուսները նույնիսկ կարծես ավելի շատ էին: Դիջեյը նվագում էր բոլոր ժամանակների փախստականների հիմնը: «Нас не догонят! Нас не догонят! Нас не догонят! Нас не догонят!»,– մանտրայի պես կրկնում էր դեռահաս աղջկա ձայնը դինամիկներից: Թե ինչպե՞ս եղավ, որ քսան տարի առաջ «Տատու» խմբի նման պոպսայոտ պրոեկտը նման մարգարեական երգ է գրել, տիեզերքի խորհրդավոր առեղծվածներից է: Թվում էր, որ թեքնոյի ռիթմերի շնորհիվ ակումբում մոգական մի տարածք է ստեղծվել, որտեղ մարդկանց գիտակցությունները միահյուսվել են, և ես զգում էի այն, ինչ զգում և մտածում են ռուսները: «Только скажи — дальше нас двое, Только огни аэродрома, Мы убежим — нас не догонят, Дальше от них, дальше от дома»: Նրանք կարծես ինձ հետ խոսում էին դինամիկներից լսվող երգի բառերով, պատմում էին, որ այլևս չէին կարող ապրել այնտեղ, որտեղ ծնվել և մեծացել են, չեն կարող ապրել այն մարդկանց հետ, ում հետ ապրել են իրենց ողջ կյանքը: «Не говори, им непонятно, Только без них, только не мимо, Лучше не так, но не обратно, Только не с ними! Только не с ними! Только не с ними...» Ռեմիքսը վերջացավ, և բեղավոր բելառուս դիջեյը սկսեց նվագել ինչ-որ մռայլ ծանր թեքնո, առանց ավելորդ բառերի: Ես հետ եկա իրականություն և հասկացա, որ պատահական չէր այս մարդկանց գալը: Պատմությունը ոչ թե ուղիղ գիծ է, այլ պարույր: Այն, ինչ եղել է, կրկնվելու է անվերջ, ամեն անգամ նոր ձևով, բայց էությունը դրանից չի փոխվելու: Հայկի և Բելի պատմությունը սոսկ առասպել չէ, այլ իրականություն, որը կրկնվել է բազմիցս և կրկնվելու է հավերժ: Հազարամյակների ընթացքում մարդիկ տարատեսակ բաբելոններից և բելերից հեռացել, եկել, գտել են լեռնային երկիր, որտեղ իրենց ազատ են զգացել, և այստեղ, Մեծ Լեռան փեշի տակ, նոր կյանք են սկսել: Չետո մտածեցի, որ Բաբելոնից հեռանալու գաղափարը ոչ միայն մեզ մոտ կա, այլև ռաստամանների կրոնում, սկսեցի մտածել հայ-ռաստամանական առնչությունների մասին, և մտքերս տարան ինձ ուրիշ տեղեր:

Մի հատիկ Հայաստան

Մյուս օրը գնացի այն սրճարանը, որտեղ կոլումբիական սուրճ են տալիս (և որտեղ ռուս տեղափոխվածներն այնքան շատ են, որ նստելու տեղ գտնելը լուրջ խնդիր է), որ ավարտեմ այս տեքստը: Կարմրամազ և կապուտաչյա բարիստուհին այլևս այնտեղ չէր, սրճարանում տիրություն էր անում մի ուրիշ աղջիկ՝ սևահեր, մուգ հայկական աչքերով: Սկսեց պատմել իրենց թեյերի և սուրճերի մասին, այնքան մանրամասն, որ ես ենթադրեցի, որ նախորդ կյանքում մարդկանց տարբեր բույսերով բուժող շամաններից էր եղել: Հավանաբար նախորդ ռեինկարնացիայում սովորած կախարդական հնարքներ կիրառելով՝ համոզեց ինձ խմել սուրճ կաթով, չնայած ես ընդհանրապես ոչ սուրճ եմ խմում, ոչ կաթ: Բնականաբար, խոսակցությունը հասավ Կոլումբիայի Արմենիա քաղաքին: «Լավ է, որ մի հատ էլ Արմենիա կա, մարդ ես էլի, չգիտենք ինչ կլինի այստեղ»,– ասացի ես: «Դե ընդհանրապես աշխարհում Արմենիա անունով շատ տեղեր կան»,– նկատեց նախկին շամանուհին: «Բայց Հայաստանը միայն մի հատ կա»,– ինքս ինձ համար անսպասելի պաթոսով ասեցի ես:

Մենք խորհրդավոր լռեցինք և ես դուրս եկա փողոց՝ հաճելի գարնանային արևի տակ իմ սուրճը խմելու:

Միխայել Զոլյան
Բիայնա Մահարի

← 1991 թվական, Մոսկվա-Երևան գնացքի վերջին օրերը

Մոսկվա-Երևան գնացքը 1991 թվական

2022 թվականի մարտի առաջին օրերին Մոսկվայից Երևան օրական ժամանում էր մինչև 40 չվերթ. դա միակ հարմար տարբերակն էր ռելոկացիայի որոշում կայացրած ռուսաստանցիների համար: Մինչդեռ խորհրդային տարիներին ԽՍՀՄ մայրաքաղաքից Երևան կարելի էր հասնել գնացքով:
«Կուրսկիյ» կայարանից դեպի Երևան շարժվում էր օրական երկու գնացք: Առաջինը N55/56 համարի տակ արագընթաց ֆիրմային «Դրուժբան» էր (հետաքրքիր է, որ մյուս ֆիրմայինները, որպես կանոն, կոչվում էին համապատասխան միութենական հանրապետությունների անուններով՝ «Գրուզիա», «Ուկրաինա» և այլն): Ֆիրմային գնացքները սովորաբար ավելի մաքուր էին, հարմարավետ, արագ ու ավելի լավ սպասարկում ունեին: Մոսկվա-Ռիգա ուղղու «Լատվիայում» (մի քանի տարի անընդմեջ ճանաչվել է լավագույն ֆիրմային գնացքը ԽՍՀՄ-ում), օրինակ, առանձին մանկական վագոն կար, որտեղ կարելի էր զբաղեցնել մանուկ ուղևորներին:
Մյուսը սովորական ուղևորային գնացք էր, որն իր հետ կցված տանում էր մեկ-երկու հավելյալ վագոն, որոնք Ախուրյանի կայարանում տեղակցվում էին ու շարունակում ճանապարհը դեպի Անկարա, Թուրքիա:
Երկու գնացքն էլ անցնում էին Աղվերի, Սուխումի և Թբիլիսիի կայարաններով: Կապը պահպանվում էր ընդհուպ մինչև 1992 թվականը, բայց դադարեց վրաց-աբխազական հակամարտության սրման ժամանակ. Սուխումի կայարանը դադարեց գնացքներ ընդունել, իսկ շենքը մի քանի տարի օգտագործվում էր որպես ռազմամթերքի պահեստ:

МОСКОВСКАЯ ЦЕНТРАЛЬНАЯ
ГОРОДСКАЯ СТАНЦИЯ
МПС
ПОСАДОЧНЫЙ ТАЛОН
СКОРЫЙ ПОЕЗД № 33
Москва ЕРЕВАН
КУПЕЙНЫЙ
Отправляется
с Курского вокзала
22 СЕН 1951
в 13 час. 30 мин.
Вагон № 6 Место № 3

↑ 1951 թ.՝ Մոսկվայից Երևան է շարժվում N33 արագընթաց գնացքը

Արեգ Դավթյան

evnmag.com
կարդայեք առցանց



The Main
Design Store

@TheMainDesignStore

/

Մեր Մկրտչյան 10
(Միրզոյան գրադարան,
առաջին հարկ)